

Hentchak :

Organe Central  
DU PARTI

HENTCHAKISTE

# Հ Ն Չ Ա Կ

Journal Arménien

mensuel

XX Année

## ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՕՐԳԱՆ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

### ՄԵՐ ԽՈՐՀՈՒՐԴԸ

«Ներխուսաարդ Թիւրքիան», որպէս քաղաքական կուսակցութիւն, գոյութիւն չի ունեցել երբ և է. նա չկայ և՛ Հիմա: Եղել են և կան «Ներխուսաարդ Թիւրքեր», — անհատներ, խմբակներ՝ աւելի ու պակաս հետևողականներ, աւելի ու պակաս աչքի ընկնողներ, և միայն այդքան:

Պատմութիւնը, ժամանակակից իրականութիւնը մեզ ասում է, որ տաճիկ ազգի ժողովրդային դանդաղածը չի ծնել, չի բեղմնաւորել «Ներխուսաարդ Թիւրքիա» անուն կրող մի կուսակցութիւն, որ արտաշայտիչը դառնար նոյն այդ ժողովրդի ցաւերին, պահանջներին, յառաջադիմող կեանքի նոր պայմաններին:

Եղած են «Ներխուսաարդ Իտալիա», «Ներխուսաարդ Գերմանիա», «Ներխուսաարդ Զուիցերիա», «Ներխուսաարդ Ֆրանսիա» . . . բայց այդ «Ներխուսաարդ» կուսակցութիւնները քաղաքական ասպարէզ մտել են որպէս արդիւնք, ուրեմն և՛ արտաշայտիչ, կեանքի այն նոր պահանջների, որոնցից զուրկ էին իրենց արտադրող ազգակիները և ուզում էին ունենալ, ձեռք բերել պայքարելով, կռուելով, արին թափելով:

Թիւրքերի մէջ եղան անհատներ, որոնք երկպակամ այդ նորաձևութիւնն էլ ուզեցին վրանին առնել, և առան, բայց դա հերիք չէր:

Ամէն երկրի «Ներխուսաարդ» կուսակցութիւն, որպէս ծնունդ պատմական մի բույսի և ժողովրդի մի դասակարգի պահանջների կարողացաւ որոշեալ դեր խաղալ և, շատ ու քիչ, իրականացնել այն գաղափարները և ցանկութիւնները, որոնց անունով և որոնց բաւականութիւն տարու համար իրենք երևան էին եկել:

Աւելի քան կէս դարու իր կեանքով «Ներխուսաարդ Թիւրքիան» ոչինչ, բացարձակապէս ոչինչ չըկարողացաւ անել, որովհետև նրա հետքի նա կ'ները մոռացել էին ամէնից գլխաւորը, այն՝ որ դեռ անունը առնելը հերիք չէր, հարկաւոր էր որ «երկրպական կեանքի», փոխ առնուած երկրների պայմաններն էլ իրենք ունեցած լինէին. բայց որովհետև այդ պատուանդանը, կենսատու աղբիւրը, ճնող ուռձացնող պայմանները չկային, ուստի «Ներխուսաարդ Թիւրքիան» եղաւ անւանական, խորթ, օտար թուրք կեանքին, մանաւանդ ժողովրդական զանգուածներին, մինչև այսօր:

«Ներխուսաարդ Թիւրքիան» իր ծագումը պարտական է բերրոկրատական հաշիւների: Ի՞նչ հնարներով Թիւրքիայի անկման առաջն առնել, երրոպական միջամտութիւնը չէզոքացնել և հպատակ ժողովրդների բողոքի ձայնը, շարժումները խեղդել, նրանց ձուլել, — այս է եղել սկզբնական դեկավարիչ գաղափարը «Ներխուսաարդ Թիւրքիայի Հեղինակներին»: Թուրք ժողովրդի, Թիւրքիայի մէջ ճնշուող ազգերի կամ նրանց որ և է մի դասակարգի կամքի և ցանկութիւնների արտաշայտութիւնն էր դա:

«Միահատեան Սահմանադրութեան» մասին վիճին անգամ աւելորդ է: Արևելեան ինդրի դեռ երեկուայ պատմութիւնից տեղեկութիւն ունեցողը գիտէ թէ այդ «Սահմանադրութիւն»ը լոկ մի «միջոց», մի «հնարմացութիւն» էր, «դիւանադրական մի խաղ» 1875-1876-ի քաղաքական ներքին և արտաքին դժուարութիւնների առաջն առնելու:

Այդ այն ժամանակն էր, երբ Բոսնիայի և Հերցեգովինայի ապստամբները արձակել էին յուլիս 29-ի իրենց մահի ֆէստը:

Եւ ի՞նչ էին յայտարարած.

«Նա՛ որ ինքն իր վրայ փորձած չէ թուրք բարբարոսութիւնը, նա՛ որ ականատես չէ եղել քրիստոնեայ ժողովրդի չարչարանքին ու տառապանքին, այնպիսին չի կարող նոյն իսկ մօտաւոր գաղափար կազմել թէ ի՞նչ է ու այն նա՛ այդ համը արարածը, անասունից ստորագոյնը, մարդկային կերպարանքով մէկը՝ ծնւած չափտենական ստրկութեան համար . . . մեր հողի ամէն մի մասնիկը ոռոգուած է մեր նախահայրերի արինովը, արտասուքովը . . . Այսօր ու այն անվճռել է կռուել իր ազատութեան համար՝ մինչև վերջին շունչ, մինչև վերջին մարդ . . . Մա՛հ կամ Ազատութիւն» . . .

Եւ ուսցեալի տանջալից կրճքից, նրա երակներից ճորող արեան այդ բանաստեղծութիւնը արձագանք էր գտել ամբողջ Բալքանեան Թերակղզում:

Մէջ մի հետևանք չէին ունեցած յեղափոխականների հետ սկսած բանակցութիւնները. արդիւնք չէին տուած ո՛չ Անդրաշիի ծանուցագիրը (20 յունւար 1876) և ո՛չ էլ Բերլինի Մէծօրանկումը (11 մայիս 1876): Մերքիան, Մոնթենէգրոն պատերազմի դաշտն էին դուրս եկած (յունիս 1876) և նոյն տարուայ դեկտեմբերին Կ. Պօլսի Կոնֆէրանսն էր գումար-

ւած, — ահա՛ այդ բոլորներն մէջն էր, որ մէկէն ի մէկ Նըղզըի պարատում ծնուեց ու խանձարուրուեց օտոտմանեան «Մահճանադրութիւնը»: Եւ պատակը պարզ ու որոշ էր, և որովհետև ոչ ոք չէր խաբուեց, ուստի «Հեղինակները» տեսնելով իրենց յոյսերի ի դերև դուրս գալը, օտոտմանեան «Մահճանադրութիւնը» ուղարկեցին Հանդէպու այն տուփի մէջ, ուր որ էին իր անդրանիկները՝ Գիւլ-Հանէն և Խաթիբի-Հիւճալուներ:

Այժմա կան «Ներխաասարդներ» որ կուզեն Հնու-թեան փոշուց Հանել այդ «Մահճանադրութիւնը» և որ-պէս Հակադեղ Հակադրել Համիդեան բռնապե-տութեանը:

Ի՞նչ միջոցներով են ուզում «Ներխաասարդները» վերականգնել այն «Մահճանադրութիւնը» որ, իրենց ասելով, օսմանեան պետութիւնը քաղաքակիրթ պետու-թիւնների կարգին պիտի Հասցնէր և օտոտմաններին էլ, առանց ցեղի և կրօնի խարութեան, երջանկութեան և բարօրութեան:

— Ծառերով, նոյն ինքն իրեն՝ Սուլթան Համիդին խորհուրդներ տալով, թուրք աւագանիներին, բարձրաս-տիճան զինուորականներին, միւսխիւճաններին Հոգին կա-ռավարող իւլէճաններին և մոլլաներին աղաջանքներ, յորդորներ ուղղելով:

Ուրի՞շ:  
— Եւրոպական պետութիւններին խնդրագրեր տալով, որ նրանք Հրահանգեն իրենց դեսպաններին Սուլթանի վրայ ճնշում գործ դնելու, որ «Մահճանադրութիւնը» վերահաստատի, բայց այդ ա՛յնքան պուշութեամբ և չափաւորութեամբ, որ այդ քաջով օտոտմանեան կաշե-րականութեան և ամբողջականութեան իրաւունքին Հար-ւած ՀՀասցնուի:

Իսկ եթէ դրանցից և ո՛չ մէկն էլ ազդու դեղ լինի՞, մեղափոխութի՞ւն, յեղափոխական շարժո՞ւմ:

— Ոչ, պատասխանում են, «Ներխաասարդներ»-ը, դա կլինի դաւաճանութիւն և մեր երկրի կործանումն, որովհետև յեղափոխական շարժումները կարող են արտաքին միջամտութիւն առաջացնել, իսկ միջամտու-թեան Հետևանքը կլինի կա՛մ օտոտմանեան երկրի բաժանումը պետութիւնների կա՛մ զանազան դրժ-գոհ և յեղափոխութեան Հնոց եղող ժողովրդների միջև:

Ու «Ներխաասարդներ»-ը — երբեմն սիրէնական, երբեմն էլ կծու խօսքերով — չեն դադարում Հայ յեղափոխականներին դիմելուց, որ նրանք թող-նեն յեղափոխական ամէն շարժում, մոռանան Հայ-կական Խնդիր, ընդգրկեն ընդհանուր օսմանեան կայսրու-թեան բարենորոգման գործը և իրենց առաջին պահանջը անեն «Միտհատի Մահճանադրութեան» վերականգնումը:

Մեր հայերը իրենց դուռն աշխատանքով օս-մանեան բռնապետութեան Հիմը դնելու նիւթական միջոցը տուեցին և դարերի ընթացքում սուլթանա-կան բերդը իրենց արիւնով, արտասուքով թրծեցին, Հաստատ պահեցին և այդ բոլորի մէջ իրենք միշտ մնացին ու ա յ ե ա յ, «անասուններից էլ աւելի ստու-րագոյնը»: Այժմա՛ երբ օտոտմանեան բռնապետութիւնը նեղ է գալիս նոյն իսկ նրա երէկուայ շահագոր-ծող մասին, և սկսել է ճաթճթել, կուզէին որ որդիներս նորից արիւն քրտինքի մէջ մտնէինք, մեզ զոհէինք, քրիստոնէական համբերութեամբ մեզ մո-

ռանայինք և թոյլ չտայինք որ այդ անիծուած բռնապե-տութիւնը փլչէր, ու մի այնպիսի փառա «Մահճանա-դրութիւն» էլ վերահաստատէինք, որ մեզ իբրք բերելիք ո-չինչ չունի, բացի նոյն այն շղթաներից, որ ունինք արդէն:

Ո՛չ:  
Մենք «Միտհատեան Մահճանադրութեան» հա-մար ո՛չ բերան կտանեցնենք և ո՛չ էլ զրիչ: Հա-ղար աւերող կեանք եթէ ունենայինք, մէկն էլ չէինք տալ այդ «Մահճանադրութեան» համար:

«Ներխաասարդներ»-ը նո՛ր են պղծում որ Հայ տարբը ոյժ է, իրական ոյժ, — ապագան դեռ իրենց շատ պատ-րանքներից պիտի հանի:

Գրթննջո՞ւմ են որ մենք ուզում ենք բաժանուել կամ առանձին գործ ենք ստեղծում ու միայն մեզ Հայաստանի վրայ մտածում:

Դրան պատասխան ունինք պատմութիւնը: Նա է մեզ ցոյց տուել այն ուղին, որի մէջ որ մտել ենք, և որովհետև այդ պատմութիւնը օտոտմանեան պետութիւնը ընկնելիքների ցանկի մէջն է դրել, ուստի մենք մեր գլխի ճարը պիտի տեսնէինք, որովհետև չէինք ուզում մեռնել, որովհետև ապրելու պայման-ներ, կենսականութիւն ունեցող ժողովուրդ էինք:

Ուղո՞ւմ են «Ներխաասարդները» մեր աջակցու-թիւնը: — Այդ կուենան: Ն՛րբ:

— Երբ իրենք կանոնաւորապէս կկազմակերպուեն, որ-պէս քաղաքական կուսակցութիւն և կը ծանեն թուրք ժո-ղովրդական խաւերի մէջ, երբ ո՛չ թէ լէ գ ա ի, այլ յ ե դ ա փ ո խ ա կ ա ն գաղափարներ կքարոզեն, երբ թուրք զիւղացուն, աշխատուորին կհասկացնեն թէ ստեղծուած քաղաքական և տնտեսական բոլոր չա-րիքների, բոլոր անօրէնութիւնների և քայքայման ու կործանման պատճառը ո՛չ թէ այս և այն Սուլ-թանն է, այլ սուլթանականութիւնը, բռնապետականու-թիւնը, բացարձակութիւնը՝ որին դէմ դնելու, արդէլք հանդիսանալու համար միայն մի գլխաւոր պայման կայ, այն է՝ Ռամկավարական Մահճանադրութիւն, որ կարելի էր ունենալ օսմանեան կայսրութեան մէջ եղող բո-լոր ժողովրդների անխտիր և աղատ մասնակցութեամբ՝ յ ե դ ա փ ո խ ա կ ա ն կ ա յ ի ն ո վ բ ո Ն ա պ ե տ ու թ ե ա ն ծ ա ո ը խ ո Ր տ ա կ ե լ ու յ յ ե տ ո յ :

Միայն այդ է ուղին, որով կարելի է ամբողջ Թիւրքիան երիտասարդացնել, և մենք որ 20 տարի է արեան մէջ ենք յողում, որ երբ հարիւր հազար զոհեր ենք տուել մեր ազատութեան և բռնապետու-թեան խորտակման համար՝ մենք պատրաստ ենք մեր բաժին ընկած պարտականութիւնը կատարել զոհերի, նահատակների նորանոր շարքեր տալով:

Պատրա՞նք է մեր խորհուրդը:

Եթէ այո՛, ապա պատրանք է և՛ օսմանեան պե-տութեան գոյութիւնը, այդ մասին խօսելն այլևս աւելորդ է: Իսկ եթէ ո՛չ, ապա յեղափոխական շարժման մէջ պիտի մտնել՝ սուլթանականութեան խորտակումը, Ռամկավարական Մահճանադրութիւնը և բաղկացուցիչ ժողովրդների քաղաքական ինքնավարութիւնը ընդհա-նուր նշանաբան անելով:

— Ահա՛ մեր խորհուրդը՝ գործել ուզող թուրք «Ներխաասարդներ»-ին:



### ՎԵՑ ԵՐԱՌՈՐԵՎԵՆՈՒԹԻՒՆ (ԳՈՒՆԻՉՄ) ՄԵՐ ԳՆԻՆՆԵԹ ՍՎՋՐՈՒՆ-ՔՆՆԵՐԻ ՄԻՋ

Եթէ մեր հակառակորդներին այն հարցը առաջարկուի՝ թէ կա՞յ երկուտրականութիւն (գուպիզմ) Հնչակեան Կուսակցութեան դաւանած սկզբունքների մէջ, նրանց անսկզբնական պատասխանը կը լինի այն՝ որ ո՛չ միայն երկուտրականութիւն կայ մեր հետապնդած հիմնական սկզբունքների, այլև մեր գործունէութեան մէջ:

Ինչի՞ վրայ են հիմնուած մեր հակառակորդները իրենց պատճառաբանութիւնները:

Նրանք ասում են, թէ Հնչակեան Կուսակցութիւնը ներկայումս գործում է երկու տարբեր միջավայրերում՝ Ռուսաստանում և Տաճկաստանում, և քանի որ այդ երկրների տնտեսական և քաղաքական պայմանները բոլորովին տարբեր են իրարուց, և քանի որ մի տեղ՝ Ռուսաստանում տիրապետում է կապիտալիզմը, իսկ Տաճկաստանում՝ աւատականութիւնը, ուստի մի կուսակցութիւն միաժամանակ չի կարող գործել այդ երկու տեղերումն էլ, և եթէ գործելու լինի, ապա նա պիտի ունենայ երկու տարբեր սկզբունքներ՝ մին Տաճկաստանին յարմարուող, միւր՝ Ռուսաստանին:

Բացի դրանից, փաստում են մեր քննադատները, երկուտրականութիւն կայ, քանի որ Հնչակեանները Կովկասի մէջ հանդիսանում են սօցիալիստներ, սօցիալիզմ է մօկրատներ, իսկ Տաճկա-Հայաստանում՝ ազգայնականներ:

Եւ նրանք պնդում են որ այդ այդպէս է, որովհետեւ Տաճկաստանում, իրենց մասձուծով, կարելի է գործել միայն նացիօնալիստական հողի վրայ, ինչպէս որ Հնչակեանները, որպէս թէ, մինչև ցարդ՝ ստիպուած այդպէս էլ արել են, այնտեղ սօցիալիստական գործունէութեան հող չլինելով: Սօցիալիզմ է մօկրատ Կովկասում, իսկ ազգայնական՝ Տաճկաստանում, ահա՛ եղբայրացիներ, որին յանդուրձում են մեր հակառակորդները. ուրեմն և վիճաբանութիւնը փակուած համարելով՝ պնդում են որ Հնչակեան Կուսակցութեան մէջ կայ անվերածելի հակասութիւն և քանի որ կայ հակասութիւն, ուրեմն հակասական սկզբունքների վրայ կանգնող մի կուսակցութիւն կա՞մ պիտի փշրուի և իր տեղին յարմար սկզբունքների վրայ կանգնի և կա՞մ նա պիտի ընկնի բոլորովին՝ որպէս այլևս ո՛չ-համապատասխան կեանքի իրական պահանջներին:

Ե՛րբ է որ Հնչակեան Կուսակցութիւնը կազատուէր իր մէջ ավիրող հակասութիւններից, — երբ նա, յարում են մեր խորհրդատու քննադատները, Ռուսաստանի մէջ ձուլուէր Ռ. Ս. Դեմոկրատիայի մէջ, ու այդպիսով ձեռնմխի լինէր Տաճկա-Հայկական Խնդրից՝ այդ դերապահանջօրէն նացիօնալիստական գործից: Քանի կայ Տաճկա-Հայկական Խնդիր Հնչակեանութեան թեւերի վրայ, ապա նա նացիօնալիստ լինելուց չպիտի դադարի և հակասութիւնը կը շարունակուի:

Այդպէս մասձուծ են, այդպէս ասում են. բաց այդպէս մասձուծելը, այդպէս ասելը դեռ հարցը չի վճռում:

Իրօք կա՞յ Հնչակեան Կուսակցութեան մէջ երկուտրականութիւն:

Մեր պատասխանն է որ՝ ոչ. ո՛չ մեր դաւանած սկզբունքների և ո՛չ էլ մեր քաննամեայ գործունէութեան մէջ կայ հակասութիւն: Մենք նացիօնալիստներ չենք եղած, և չենք, Ռուսաստանի և Տաճկաստանի մեր գործունէութեան մէջ հակասութիւն չէ եղած, և չկայ: Մենք սօցիալիստներ ենք եղած, և ենք, երկու տեղերումն էլ:

Մեր հակառակորդները, հակառակ իրենց պաշտօնների՝ դեռ անկարող եղան զիտական հիմունքներ ներկայացնող փաստեր մէջտեղ դնել. նրանց ասածները բոլորն էլ անձնական

կարծիքներ, հայեացքներ, դատողութիւններ են առանց գիտական փաստերի:

Նրանք՝ որոնք ուզում են հնչակեաններին հակասութեան, երկուտրականութեան և ոչ-սօցիալիստութեան մէջ բռնել, պէտք է որ հնչակեան ծրագրից և պատգամաւորական ծրագրերի որոշումներից աւամ վկայաբանութիւններով ցոյց տան թէ մենք երբ և իցէ քարոզել ենք արտագրութեան միջոցներին անհատական սեպհակա՛ն աւտիքութիւն և ազատ մրցում: Տարածած է այդպիսի մի սկզբունք Հնչակեան Կուսակցութիւնը Կովկասի կամ Տաճկա-Հայաստանի մէջ. այդ սկզբունքները իր կաղձակերպական մարմինները գործած, ձգտումներ արտաշատած են, գործքեր յառաջացրած: Տեսնուած է այդպիսի մի իրողութիւն: Մեր պատասխանն է որ՝ ոչ: Հնչակեանները ո՛չ մի ժամանակ, իրենց գործունէութեան ընթացքում չեն քարոզած, որ արտագրութեան միջոցները մասնաւորների սեպհակա՛նութիւնը պիտի մնան և ազատ մրցուած ընկերութեան հիմունքը պիտի կազմի:

Ընդունած ենք մենք, ոչ-սօցիալիստներին սիրելի և նրանց դաւանանքի անկիւնաքարը կաղձող *laisser faire*-ի ըսկըբունքը, իրաւացի համարած ենք *The survival of the fittest*-ը (յարմարագոյնի վերապրելը) ընկերային կեանքի տեսակէտից: Անհատներին պատասխանատու բռնած ենք եղած չարիքներին: Գոյութիւն ունեցող ընկերային անարդարութիւնները, անհաւասարութիւնները, աղքատութեան և թրջաւտութեան պատճառը արտագրութեան միջոցների մասնաւորների սեպհակա՛նութիւնը լինելուն պատճառով է ասելուց դատ՝ ուրիշ բացատրութիւն տուած ենք:

Կա՞յ մի սօցիալիստական կուսակցութիւն, որ այդ խնդիրները մեզանից տարբեր կերպով է շօշափել և տարբեր կերպով հասկացել:

Ե՛րբ, ո՛ւր ենք գրած, ասած, թէ տուած մի ընկերութեան մէջ երկու հակադիր դասակարգեր չեն եղել, որ պատճառութիւնը ինքնին դասակարգային կռուի իրադարձութիւն չէ իր ամբողջ տեսողութեանը մէջ՝ աշխարհագրական բոլոր լայնութիւնների տակ: Ընդունած ենք մէկ դասակարգի տիրապետութեան արդարութիւնը միւսի վրայ: Եթէ այդպիսի մտքեր քարոզած լինէինք, և դա ապացուցուէր, արդարև մենք ոչ-սօցիալիստական մտքեր դաւանողներ եղած կլինէինք:

Եւ դրա փոխարէն ի՞նչ արած և ի՞նչ քարոզած ենք:

Հայկական բլբլիօզաֆիային (մատենագիտութեան) դիմելու հարկ չկայ համոզուելու համար, որ սօցիալիստական ուղիւթեանը պահանջութիւն ստեղծողը, հայ կեանքի մէջ, առաջին անգամ եղել է Հնչակեան Կուսակցութիւնը: Մեր հրատարակութիւնները այնտեղ են այդ փաստը հաստատուելու համար:

Մենք միայն սօցիալիստական գրականութիւն չենք ստեղծած՝ առաջին անգամ, այլ՝ սօցիալիստական սկզբունքների համար կոմունտար բանակուի մղած ազգայնական կոչուողների դէմ — դրան վկայ մեր թերթերը:

Եւ ի՞նչ ենք ասած:

Այն՝ ինչոր ամէն սօցիալիստական կաղձակերպութիւն. — այսինքն՝ ներկայ ընկերային կեանքը, ամէն տեղ, դրուած է անարդարութեան վրայ. իսկ այդ անարդարութիւնը հեռանք է դասակարգային կռուի. իսկ դասակարգային կռիւ կայ, ուրովհետեւ արտագրութեան միջոցների մասնաւորների սեպհակա՛նացումն կայ: Եւ ամբողջ պատճառութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ դասակարգային անընդհատ կռիւ արտագրութեան գործիները իւրացնելու, մէկը միւսի ձեռքից յափշտակելու: — Այդ կռիւը եղած է, կա՞յ և մեղանում, հայ Հայրենիքում:

Մենք ասած ենք, որ ամէն դասակարգ մի անգամ յաղթող, մի անգամ երկրի արտագրութեան գործիները իր

ձեռքը անցնող, նա այնուհետև այդ երկրի քաղաքական կազմը յարմարեցնում է նոյն այդ նպատակին՝ այն է արտադրութեան միջոցները իր ձեռքը մտնուն և հակառակ դասակարգին զրկում զրութեան մէջ պահելուն: Քաղաքական ձևը, քաղաքական կազմակերպութիւնը, որպէս դասակարգչին յարաբերութեան արտայայտիչ, արտաքին վահանը՝ ծալքն է եղել, ներքին ծալքը՝ տնտեսական ոյժերը իր ափին մէջ պահելու համար: Նուաճող և նուաճող ժողովրդների մէջ, հակառակ տիրող ժողովրդի վայելած արտօնութիւններին, կեանքի կռիւր ուրիշ գծերով առաջ չի գնում:

Ե՛րբ է, որ անարդարութիւնը, անհասարակութիւնը կվերանայ ընկերութեան ծոցից, — երբ պատճառն ոյժերը ասպարէզից կթափուեն և արտադրութեան գործիները ծանաւորի սեպհականութիւն լինելուց կդադարին ու կտիրի արտադրութեան ոյժերի ընկերականացումը, սոցիալականացումը:

Ինչո՞վ է որ այդ նպատակին կարելի է հասնել, — քաղաքական իշխանութիւն ձեռք բերելով, իսկ այդ քաղաքական իշխանութիւնը ձեռք բերելու համար պէտք է կազմել առանձին կուսակցութիւն, որպէս արտայայտիչ այդ նպատակին ձգտող դասակարգի:

Ճշմարիտ ազատութեան, հասարակութեան, ընդհանուր բարօրութեան գաղափարներին ճարձին տալու համար նախ պէտք է ձգտել թուրք Բուսակալութիւնը խորտակել, տիրող քաղաքական ձևը ասպարէզից վայր բերել, ջնջել քաղաքական և տնտեսական այն բոլոր սպանիչ ու կաշկանդիչ պայմանները՝ որոնք թոյլ չեն տալիս հայ ժողովրդին ընդհանուր ապէս և նրա արտադրող ծասին ծանաւորապէս՝ ապրելու, յառաջադիմելու և կեանքի նոր պայմաններ ստեղծելու ու դէպի սոցիալիստական կարգերի հաստատութիւնը ձգտելու: — Հայկական Խորհրդի էութիւնը այդպէս եղել է մեզ համար:

Ուրիշ երկրների մէջ գործող սոցիալիստները, համանման խնդիրների նկատմամբ, սրանից տարբեր բան առած չունին, և այսօր չէ՛ այլ շատ երկար ժամանակներից ի վեր է, որ Հնչակեան Կուսակցութիւնը, որպէս քաղաքական կազմակերպութիւն, այդ սկզբունքները ընդգրկել, տարածել և նրանց համար էլ պայքարել է: Մենք երէկ ասել ենք այն՝ ինչոր ասում ենք այսօր. այնպէս որ մեր թէօրիան միշտ շարունակում է մնալ նոյնը և նա ոչնչով, իր և ո՛չ մի պահանջով, իր և՛ ո՛չ մի հայեացքով հակասում է Միջազգային Սոցիալ-Դեմոկրատիայի հետապնդած և քարոզած սկզբունքներին ու դանազան Կոնգրեսների մէջ արձակուած որոշումներին:

Մեր ծրագրի մէջ պաշտպանուած հիմնական սկզբունքները նոյնն են, ինչոր բոլոր ազգերի մէջ գործող սոցիալ-դեմոկրատներինը: Մեր խօսքը, ի հարկէ, ծանրամասնութիւնների մասին չէ, քանի որ ամէն երկիր և ժողովուրդ կարող է ունենալ իր առանձնայատուկ պայմանները, այլ հիմնական սկզբունքներին:

Արդ, նրանք՝ որոնք ուզում են մեզ հակասութեան մէջ բռնել պէտք է որոշ կերպով, վկայաբանութիւններով (Citation) ցոյց տան, թէ Հնչակեան ծրագրի այս կամ այն մասը, նրա մէջ պաշտպանուած այս կամ այն սկզբունքը և տեսութիւնը արամագձօրէն հակասութիւն է եղած և է սոցիալիստական այն հիմնական սկզբունքներին, որ այսօր ընդհանուր սեպհականութիւն է համարուած միջազգային Սոցիալ-Դեմոկրատիային: Որո՞նք և ի՞նչ են մեր ծրագրի մէջ եղած բացառապէս ազգայնական տարրերը — ահա՛ մասնանշխելիք կէտերը, որոնց մասին ոչինչ չի ասուած մեր հակառակորդների կողմից:

Մի կուսակցութիւն չի կարելի հակասութեան մէջ բռնել նրա թերթերի մէջ դանազան ժամանակներում հրատարակուած յօդուածներէից առնուած հատ ու կտոր մասերով, այն էլ խե-

ղաթիւրուած բացատրութիւններով շաղախուած: Եթէ թերթի մէջ հրատարակուած յօդուածներով դատելու լինենք ամէն կուսակցութիւն, ապա չի կարելի գտնել մի կուսակցութիւն որ, այդ արամագձօրէն, հակասութեան մէջ գտնուած չլինէր: Բաւական է Ֆրանսիական, օրինակ, սոցիալիստական սկզբունքների անունով խօսող թերթերը և հանդէսները իրարու մօտ բերել և դժուար չի լինիլ նրանց մէջ գտնել տասնեակ հակասութիւններ: Սակայն դրանով չի կարելի ապացուցանել թէ ամբողջ կուսակցութեան մէջ տիրում է սկզբունքի հակասութիւն՝ սոցիալիզմի վերաբերմամբ:

Մի կուսակցութեան պատուանդան նրա ծրագիրն է, սրա մէջ է արտայայտուած կուսակցական փոխադասութիւնը, և հէնց դրա համար էլ, մենք պնդում ենք, որ շատ ուրախ պիտի լինէինք, եթէ մեր հակառակորդները առնէին մեր ծրագիրը, հակադրէին նրա որոշեալ կէտերը որ և է մի սոցիալիստական կուսակցութեան ծրագրի և եզրակացնէին, փաստերով, թէ մենք շեղած ենք եղել սոցիալիստական թէօրիաւից և ընկած նացիօնալիզմի մէջ:

Երէկ գործում էինք միայն Տաճկա-Հայաստանում, այսօր գործում ենք և՛ Ռուսաստանում, Հնչակեան ծրագրի ո՞ր կէտը որի՞ն հակասեց:

Եթէ սոցիալիզմը դիտութիւն էր, և է՛, ապա այդ դիտութիւնը դիտութիւն կմնար, թէօրիալի տեսակէտից, որ երկրի մէջն էլ որ մուտք գործէր:

Անշուշտ տաքտիկայի փոփոխութիւն միշտ կարող է տեղի ունենալ և մենք ընդունում ենք, որ տաքտիկան սոցիալիզմը իրականացնող ուղեգիծը պիտի լինի, և նա կարող է իր դանազան ելեւջները ունենալ, բայց խնդիրն հէնց այն է, որ մեր ընդգրկած տաքտիկան, թէ Տաճկա-Հայաստանում և թէ Կովկասում եղե՛լ է հակասոցիալիստական. ընթացե՛լ ենք Տաճկահայաստանում մի տաքտիկայով, մեր գոյութեան քրտան տարուայ ընթացքում, որ հակասած լինէր սոցիալիստական սկզբունքներից բղխած տաքտիկային. թրքական բռնապետութեան տուած պայմանների մէջ՝ մերինից տարբեր մի գործելակերպ կարելի՞ էր ընտրել:

Մեր պատասխանն է որ՝ ոչ: Ուրախ կլինէինք՝ եթէ ցոյց արուէր հակառակը:

Մեզ ոմանք էլ ասում են, թէ Հնչակեան Կուսակցութեան մէջ երկուորութիւն կայ, քանի որ նա Կովկասում սոցիալիստ է, իսկ Տաճկա-Հայաստանում ազգայնական. — ոչ, մենք սոցիալիստներ ենք թէ՛ Տաճկա-Հայաստանում և թէ՛ Կովկասում: Մենք երկու ծրագիր չունինք, այլ մի ծրագիր. և որովհետև մեր ծրագրի մէջ դրուած հիմնական սկզբունքները սոցիալիստական են, ասել է թէ նա նոյնութիւն է կազմում երկու տեղերումն էլ, ուրեմն հակասութեան, երկուորութեան խօսք լինել չի կարող:

Եւ այսպէս, գաղափարական տեսակէտից, Հնչակեանները նոյնն են Ռուսաստանի մէջ, ինչոր Տաճկաստանի:

Դանք կիրառութեան և գործունէութեան:

Ռուսաստանի մէջ Հնչակեանները ունեն իրենց ուրոյն, առանձին կազմակերպութիւնը: Մեր կազմակերպական սխտեճը երբէք չի հակասում որ և է սոցիալիստական մի կազմակերպութեան: Եթէ կան ճարդիկ, որոնք մեր առանձին կազմակերպութիւն ունենալը յայտարար նշան են համարում ոչ-սոցիալիստութեան և հետևանք ազգայնականութեան այն ժամանակ աչքախնները պիտի պաշտպանէին այն թէպը, թէ ամէն երկրների մէջ եղող սոցիալիստները միայն մի կուսակցութիւն կարող են կազմել: Մինչդեռ բոլորովին դրա հակառակն ենք տեսնում, — բազմատարր բնակչութիւն ունեցող բոլոր երկրներում մի քանի սոցիալիստական կազմակերպութիւններ կան, իրարու հետ առնչութիւն ունեցող կամ անկախ:

Եւ այդ էլ Ամստերդամի Միջազգային Կոնգրեսից յետոյ,

ուր որոշ կերպով ասուեցաւ թէ. "Կօնգրէսը յայտարարում է, որ կապիտալիստները դէմ ճիշտ ճանաչում կուզեն մէջ աշխատանքը դասակարգին իր բոլոր ոյժը տալու համար, անհրաժեշտ է որ, ամէն երկրի մէջ, բուրժուա կուսակցութիւնների հանդէպ, սօցիալիստական միացն մի կուսակցութիւն լինի, ինչպէս որ միացն մի պրոլետարիա կայ":

Եթէ այդ յայտարարութիւնը ամէն տեղ հաւասարապէս իր գործադրութիւնը չգտաւ, դա ունի, անշուշտ, իր տեղական սրտը պայմանները և առանձնաշատութիւնները:

Այդ տեսակետով մեզ հակասութեան մէջ բռնել կամ հակասօցիալիստական նպատակներ տալ՝ դա պարզապէս ապացոյց է ասոցների անուղղամտութեանը:

Կովկասի և Ռուսաստանի մէջ կուսակցական մեր առանձին կազմակերպութիւնը ունենալով՝ մենք չենք դատարարուած մեր ընկերներին անգործութեան և նրանց անդամարկում, կողմնակցում իրենց միջավայրից, — երբէք: Հնչակեանները Կովկասի մէջ ունեցած են, ունին, և պիտի ունենան, իրենց ակտիւ գործունէութիւնը թէ՛ սնտեսական և թէ՛ քաղաքական ասպարէզներում: Հնչակեանութիւնը եղած է և կմնայ սօցիալիզմի իրականացմանը ձգտող և պայքարող ոյժերից մէկը Կովկասում:

Եւ այստեղ առաջ են գալիս մեր քննադատները և մեզ ասում, թէ մենք մթազնայնում ենք այդ երկրի հայ պրոլետարիատի դասակարգային գիտակցութիւնը՝ երբ նրան ասում ենք թէ նա պիտի օգնի և՛ Տաճկա-Հայ Դատին, նրա համար կայ և՛ Հայկական Խնդիր:

Այո՛, նախ սա պարզ, որոշ պիտի լինի, որ Կովկասում ապրող, գործող, պայքարող, սօցիալիզմի գործաւորը համարուող և մեր ընկերը եղող հայ պրոլետարիատի համար կայ, պիտի լինի և՛ Հայկական Խնդիր: Կովկասի, Ռուսաստանի մէջ գործող Հնչակեանի համար կայ Տաճկա-Հայկական Դատ, նա և՛ այդ Դատի գործաւորն է, նա պարտաւոր է, իր ուժերի սահմանների մէջ, այդ Դատի լուծմանը օգնել՝ նիւթապէս, բարոյապէս և ֆիզիքապէս:

Մեր թէզը պարզ է:

Բայց դրանով մթազնայնում ենք մեր ընկերների, մեր պրոպագանդային հետևող հայ պրոլետարիատի դասակարգային գիտակցութիւնը:

Մեր պատասխանն է որ՝ ոչ:

Տեսնենք:

Անցեալ տարի, նոյեմբեր 1-4-ին, կայացաւ, Կիւմովի մէջ, Ֆրանսիական Միացեալ Սօցիալիստ Կուսակցութեան Կ Ալգալին Կօնգրէսը: Այդտեղ ձայների ջախջախիչ մեծամասնութեամբ անցաւ հետևեալ առաջարկը.

"Կօնգրէսը նորից յիշեցնում է բոլոր երկրների գործաւոր դասակարգին, որ մի կառավարութիւն չի կարող սպառնալ մի օտար ազգի անկախութեանը՝ առանց եղեռնագործութիւն գործելու այդ ազգի գործաւոր դասակարգի և նոյնպէս միջազգային գործաւոր դասակարգի դէմ. որ սպառնալիքի ենթակայ եղող ազգը և իր գործաւոր դասակարգը հրամայական պարտականութիւն ունին պաշտպանելու իրենց անկախութիւնը և ինքնավարութիւնը, այդ եղեռնագործութեան դէմ, և, այդ նկատմամբ, իրաւունք ունին յոյս դնելու բոլոր երկրների գործաւոր դասակարգի վրան":

Այստեղից պարզ է, որ ներկայումս մի երկրի՝ ո՛չ թէ ուղեղով մթազնած, այլ գիտակցութեամբ առաջնորդուող գործաւոր, պրոլետար դասակարգը չի կարող անտարբեր ճշնալ, երբ արտաքին մի ոյժ սպառնում է այն ազգի անկախութեանը, ինքնավարութեանը, "պատմական անհատականութեանը", որի մի հատուածն է և՛ ինքը:

Եւ ինչ է լինում Տաճկա-Հայաստանում:

Այնտեղ ո՛չ միայն մի եղեռնագործ ձեռք, պատմութեան

ընթացքում, խլել է մեր անկախութիւնը, արմատախլ արել մեր ինքնավարութիւնը, այլև նա այժմս, պետական ամէն ոյժ մեր դէմ ուղղած, չէ թէ սպառնում է, այլ ուղղակի աշխատում է մեզ սպանել, ջնջել, ոչնչացնել, որպէս ժողովուրդ, որպէս ազգ, որպէս "պատմական անհատականութիւն":

Կասկած կա՞յ այդ մասին:

Հակահայրենիքականների կատաղի պարագլուխ Հերվէն հրաժարում է Ֆրանսիան պաշտպանելուց գերմանական բանակների դէմ, կանխապէս համոզում լինելով, որ Գերմանիայի տիրապետութեամբ Ֆրանսիական ժողովուրդը չի ջրնջւիլ, չի կորցնիլ ազատութիւնները և իր անհատականութիւնը:

Նոյն այդ Հերվէն, որպէս գործաւոր դասակարգի ներկայացուցիչ, կաշտպանէր Ֆրանսիան, իր արեան գնով, երբ նրա վրայ յարձակում գործէ Թիւրքիան, սրովհետև յետադիմութեան այդ ազգակը, ո՛չ միայն Ֆրանսիական յառաջադիմութեան անիւր պիտի դադրեցնէր, այլ Ֆրանսիական ամբողջ ազգը դնէր այն վիճակի մէջ, ինչոր մենք ենք — այսինքն սարկացուցի մի, բնաջնջման, պատմական անհատականութեան ու թեան ոչնչացման:

Ո՛չ մի սօցիալիստական կուսակցութիւն անտարբեր կը մնար, եթէ իր երկրի գործերն էլ ճիշդ այն պայմանները ներկայացնէին՝ ինչոր ունինք մենք Տաճկա-Հայաստանում:

Կովկասի հայ պրոլետարիատը չէ թէ մթազնած, այլ վիճիտ ուղեղ կունենայ, երբ իր պայմանները ներած սահմանի մէջ, առանց իր մղած տեղական կուսակցական քաղաքական, աչքը դարձնէր և՛ դեպի սահմանի միւս կողմը, (մի սահման որ մենք չենք ընդունում), ուր բռնապետութեան ճիւղանների մէջ կուռում, արեան մէջ են լողում իր "եղբայրները," — զապաւարի, մտքի, գործքի, պատմական բախտի, հայ անհատականութեան մի հատուածը կազմող եղբայրները, — դա նացիոնալիզմ չէ, այլ սօցիալիստական պարտականութիւն:

Սա էլ որոշ պիտի լինի, որ մեզ համար ներկայումս կայ հայ ժողովուրդ և հայ հայրենիք. դասակարգային կուռի վրայ կանգնելը մեզ այդ չի արգիլում, և ո՛չ էլ դա մեզ զբլրում է նացիոնալիզմի մէջ:

Եթէ այսօր մի արտաքին ոյժ ուղեր ոչնչացնել, ջրնջել գերմանական ժողովուրդը, Ֆրանսիական ժողովուրդը, . . . en bloc առանց դասակարգի խտրութեան, և այդ միայն նրա համար, որ այդ ժողովրդի գոյութիւնը վտանգի դուռ է բաց անում այդ ոյժի համար, այդ դէպքում այն ո՛ր սօցիալիստական կազմակերպութիւնն էր, որ ձեռնապահութիւն կբարոզէր, — և ո՛չ մէկը:

Ուրիշ է թէ շատերի համար այդպիսի պարագայ, այս րոպէիս, չի ներկայանում, և ամէն սօցիալիստական կուսակցութիւն ջանք է թափում որ այդպիսի մի եղեռնագործութիւն չհանդիպի. բայց մե՞զ համար, — մեզ համար ո՛չ միայն այդպիսի րոպէ կայ, այլ նա միշտ դաժնիկեան սրի նման կախւած է մեր զլխից, դա մեր կեանքն է, մեր կեանքի առանձնաշատակ պայմանները: Եւ երբ մեր այդ կեանքն է որ զորում է Տաճկա-Հայաստանում ու մենք քսան տարի անտեղ գործել ենք, երեք հարիւր հազար կոտորածի հետ տուել ենք և՛ մեր ամենաթանկագին ընկերները, — մենք այդ բոլորը մոռանա՞նք և Կովկասի հայ պրոլետարիան ձեռնապահութիւն քարոզենք, նրան ասենք, որ սահմանից այն կողմը իրեն համար ոչի՛նչ չկայ — մենք այդպիսի եղեռնագործութիւն չենք կարող գործել. և ինչո՞ւ, ո՞ր գիտութեան հիմամբ. չէ՞ որ համանման պարագաների մէջ զանուղ ուրիշներն էլ կանէին միևնոյնը՝ ինչոր մենք, ուրեմն էլ ինչո՞ւ մեղադրանք. աւելորդ չէ՞:

Ուրեմն, երբ մենք պահում ենք մեր առանձին կազմակերպութիւնը թէ՛ Ռուսաստանի և թէ՛ Տաճկա-Հայաստանի մէջ, դա ունի իր առանձնաշատակ պատճառները, պատճառներ որ չեն հակասում սօցիալիստական սկզբունքներին:

Տաճկաստանի մէջ ազգայնական և Ռուսաստանի մէջ սօցիալիստ երեւիք շատերը Հիմնում են այն սխալ ելլակացութեան վրայ, թէ մինչդեռ առաջին տեղում տիրապետող է աւատականութիւնը, երկրորդում՝ կապիտալիզմը, ուրեմն առաջին վայրում սօցիալիզմի խօսք լինել չի կարող:

Մի կողմ թողնենք այն իրողութիւնը, որ Տաճկաստանում ներկայումս երբեք տիրապետող չէ աւատականութիւնը, որ այդ երկրում ճանաչուող սեպհակամտօրութիւնը աւելի մեծ ծաւալ ունի, քան, օրինակ, Ռուսաստանում, մեր խօսքը ճանաչուողում ենք Հեռուեալ կէտերի վրայ:

Առաջին՝ թէօրիապէս մենք Տաճկա-Հայաստանում նոյնն ենք, ինչոր Ռուսաստանում, և կա՛յ աշխարհիս երեսին սօցիալիստական կազմակերպութիւն, որ երկրի մէջ էլ որ լինէր, որ նա, սօցիալիստական թէօրիաներով առաջնորդուած ժամանակին, չանէր այն, ինչոր մենք ենք արել և անում ենք Տաճկա-Հայաստանում:

Ամէն երկրների սօցիալիստների ծրագրի էական կէտերից մէկն է ճշտական բանականների փոխանորդութիւնը ժողովրդական միլիոններով. բայց այդ ժողովրդական միլիոնին ինչո՞ւ Համար — չէ որ նա, ի Հարկին, պաշտպանը պիտի լինի այդ երկրի ամբողջութեանը և նրա անկախութեան, երբ այդպիսի մի վտանգ գալու լինի դրսից: Ո՞ր ազգի մէջ գործող սօցիալիստական մի կազմակերպութիւն, որպէս պրոլետարիատի ներկայացուցիչ, որպէս պրոլետարական մի կուսակցութիւն, ձեռքերը ծալած կը նստի, երբ այդ երկրի մէջ գտնուող ամբողջ ժողովրդին, ամբողջ ազգին, — ամէն դասակարգ միասին աւանդով — կտորեկու, բնաջնջելու դրութեան մէջ դնէին:

Այդ պարագայում միջազգային Սօցիալ-Դեմոկրատիայի ո՛չ մի Ազգային Հատուած մի բոլոր անգամ չէր տատանուել կուռի դաշա գուրս գալու, պահելով իր սկզբունքները, Հէնց իր դաւանած թէօրիայի վրայ կանգնելով:

Միթէ՞ տարբեր բան ենք մենք ասում Կովկասի Հայ պրոլետարին:

Որ բանապետական մի ոյժ յատուկէն, կանխամտածութեամբ որոշած ունէր, կրկնում ենք, Հայ ժողովրդին արձատխիւլ անել — այդ մասին երկու կարծիք չի կարող լինել. պաշտօնական գրութիւնները, նոյն իսկ թրքական ազգայնական պրակա-նութիւնը այնտեղ է այդ խնդրին կտրուկ կերպով վերջ տալու. թէ ինչի՞ց էր յառաջանում այդ ցանկութիւնը՝ դա այս բոլորէն նշանակութիւն չունի, ինչպէս այժմ խնդրից դուրս է այն, թէ ինչո՞ւ նա չկարողացաւ իր նպատակին հասնիլ — մեր առեկն միայն այն է, որ կար մի ոյժ, որ սպառնում էր, և դեռ սպառնում է, Տաճկա-Հայաստանի մէջ եղող Հայ ժողովրդին, առանց դասակարգի խտրութեան, սպառել, բնաջնջել, որովհետև նա կազմում էր մի ազգութիւն, որին թըշ-նամի էր նկատել սուլթանականութիւնը:

Իսկ ի՞նչ էր ներկայացնում Հայ ժողովուրդը ընդհանրապէս, նրա աշխատող, փոքր արտադրող, զիւղացի, արտադրութեան ամէն միջոցներից դուրս մասը՝ ճանաչուողապէս: — Քաղաքական սարկութեան հետ՝ տնտեսական կեանքի կատարեալ քայքայում, առանց իրաւունք ունենալու կեանքի նոր պայմաններ ստեղծելու: Երկու ճանապարհ կար՝ կա՛մ թոյլ տալ, որ սուլթանականութիւնը անէր, ինչոր ուղում էր, — ուրեմն մահ — կա՛մ բողոք, ըմբոստացում, յեղափոխութիւն: Եւ Հայ ժողովուրդը, ճանաչուողապէս նրա լծակը եղող փոքր արտադրող, զիւղացին, սեպհակամտուրկ մասը, իր օրգանական կեանքի վարպտեման հետևանքով, որպէս պատմական ոյժերի Հասունացում միակ էլքը, ինքնաբերաբար ծառ յեղափոխական շաղի մէջ:

Նրանք, որոնք սօցիալիստներ էին և սօցիալիստական թէօրիաներով առաջնորդուողներ, երկու ճանապարհ ունէին, աւելի ուղիղն ասած երկու դիրք կարող էին բռնել. — մին՝ մտածել թէ ձեռքերը ծալած նստել, թոյլ տալ որ դայ, կա-

տարուի՝ ինչոր կարող է գալ և կատարուել, ու այդ բացարձակ անտարբերութիւնը բացառել նրանով, թէ ինքը չէր կարող սպարէզ գալ և իր ուժերը հակադրել Սուլթանական ուժերին այն պարզ պատճառով, որ սուլթանների երկրում դեռ խոշոր ճարտարագործութիւնը չէր տիրապետել, որ այնտեղ դեռ գործարանները ցանցերի պէս տարածուած չէին, որ կապիտալիզմը իր տիրական իրաւունքի մէջը չէր, և որովհետև դրանք չկային, ուրեմն իրեն համար անկարելի կլինէր այդտեղ երևան գալ և կուրծք տալ: Սուլթանների երկրում գործելու համար պէտք էր սպասել, որ մինչև կապիտալիզմը տիրապետէր, իսկ մինչ այդ՝ հայ սօցիալիստը այնտեղ գործ չպիտի ունենար, ինչ էլ որ պատահելու լինէր: — Որ այսպէս մտածող Հայ սօցիալիստներ եղել են մեր մէջ, ու դեռ կան — դա փաստ է:

Բայց այդպէս մտածողները, իրենց հեռուողական մտալու համար, դեռ բաւականին երկար պիտի սպասէին Ռուսաստանում և ճանաչանդ Կովկասում սօցիալիստական պայքարը մը դելու, աչքի առաջ ունենալով որ Ռուսաստանի ամբողջ ազգաբնակչութեան հազիւ թէ 2-տոկսը պրոլետարացած՝ գործարանական բանուր է գարձած և արտադրութեան բոլոր ճիւղերը դեռ կապիտալիստական չեն. իսկ Կովկասում կապիտալիստական արտադրութեան միայն մի երկու ճիւղ է գտնուում՝ 2-3 քաղաքներում, — այդ հաշուով Գուրիան, Միլդրեիան . . . ինչպէս Ռուսաստանի ագրարային բոլոր շրջանները, ո՛չ սօցիալիստական գործունէութեան թատերաբեմ պիտի լինէին և ո՛չ էլ կարող էին ստուար թիւ սօցիալիստական բեկրուներ (նորակիչ զինուորներ) տալ, — այսինքն բոլորովին հակառակը իրականութեան:

Մի Հայ սօցիալիստ կարող էր ուրիշ կերպ էլ մտածել: Ա՛հա՛ մի ժողովուրդ, պատմական մի անհատականութիւն, զրկուած ո՛չ միայն ազգային, այլև մարդկային ամէն իրաւունքներից. դեռ այդ հերիք չլինելով՝ նրան ուղում են բնաջնջել. և ո՞վ է բնաջնջողը, — բնապետութեան խաւար ուժերը. ո՞վ է բնաջնջուողը — յառաջադիմութեան, քաղաքակրթութեան աղակ եղող մի ժողովուրդ: Արդ, միթէ սօցիալիզմը, միթէ՞ սօցիալիստական թէօրիան իրաւունք չէր տալիս արդէն եղած պրոլետարական ուժերովը կազմակերպուելու և խաւարի այդ ոյժի դեմ պայքար մղելու:

Փխտում է սօցիալիզմը ազգային անհատական գոյութեան իրաւունք. ընդունում է նա որ բռնի միջոցներով խլուեն մի ժողովրդի ազգային իրաւունքները — երբեք. բոլորովին հակառակը, սօցիալիզմը ժողովրդների, ազգերի անհատական գոյութիւնը անձեռնմխելի իրաւունք է նկատում: Ի հարկէ ազգային իրաւունք, ազգային անհատական գոյութիւն՝ դրանք հոմանիշ չեն նացիօնալիզմի, որին իրաւամբ հակառակ է սօցիալիզմը:

Արդ, մենք՝ որպէս սօցիալիստներ, չէինք կարող անտարբեր մնալ, երբ շատ երկրների մէջ գտնուող սօցիալիստներն անգամ ճի՛չ էին բարձրացնում մի մարտիրոսուող ժողովրդի համար: Երբ սուլթանականութեան և գոյութիւն ունեցող յետամնաց ոյժերին հակադրելու բաւականաչափ սօցիալիստական տարրեր արդէն մենք ունէինք:

Մենք ո՛չ միայն իրաւունք, այլ պարտականութիւն ունէինք սպարէզ մտնելու և թոյլ չտալու որ մի ժողովուրդ բնաջնջուէր, այլ տիրանար այն իրաւունքների, ինչոր անձեռնմխելի սեպհակամտութիւն է բոլոր ժողովրդներին և ճանաչարհ հարթէինք դէպի քաղաքական և տնտեսական կեանքի աւելի յարմարագոյն պայմաններ:

Եւ մեր մշակած ծրագիրը, Տաճկա-Հայաստանի համար՝ միթէ՞ իր առաջադրած նպատակներով հակասում է որ և է սօցիալիստական ծրագրի, բնա — երբեք: Փոխանորդել սուլթանականութիւնը ռամկավարական սահմանադրութեամբ,

Հասարակական ամէն կարգեր գէժօկրատացնելով և տնտեսական զարգացման ամէն արգելքներ վերացնելով, աստիճանաբար ձգտել արտադրութեան ուժերի ընկերականացմանը — ահա՛ մեր ծրագրի փիլիսոփայութիւնը. սօցիալիստական ո՞ր ծրագրերը դրանից տարբեր ձգտում ունի, թէ որպէս ձուտաւոր և թէ որպէս հեռաւոր նպատակ:

Ա՛յդ անելը քաղաքական առաքինութիւն էր, թէ ձեռքերը ծալած նստել և սպասել մինչև որ Թիւրքիան այնպիսի մի կապիտալիստական երկիր դառնար, որպիսին էր Ամերիկայի Միացեալ Նահանգները:

Մենք չենք ուզում վերադառնալ Թիւրքիայի քառասուն վիճակին. միայն այսքանը կասենք, որ սխալ է եսթադըրելն անգամ, թէ նա այժմ մի աւատական երկիր է, այս բառի իսկական նշանակութեամբ: Միջազգային պայմանները Թիւրքիայից բոլորովին առանձնաշատուկ մի երկիր են ստեղծել, ուր սօցիալիստական կատարեալ հող կայ, եթէ գործող իր հիմնական սկզբունքներից չչեղուի: Իսկ մենք այդ շեղումը չենք ունեցել:

Այն ինչերը, թէ որպէս սօցիալիստներ մենք սկզբից ի վեր ամբողջ Թիւրքիայի վերածնութեամբ պիտի զբաղուէինք, այնտեղ եղող բոլոր ժողովրդներից կազմակերպութիւններ անելով — նա՛ որ կարծում է թէ դեռ 80-ական թուականներին այդ ուղղութեամբ գործելու հող կար, չարաչար սխալում է, ինչպէս և սխալում է նա՛ որ կարծում է թէ դեռ այսօր իսկ այդպիսի կազմակերպութեամբ որ և է արդիւնքի կարելի է հասնել Թիւրքիայում. և մեր այս ասածները բնաւ չեն հակասում, որ Թիւրքիայի ուրիշ ժողովրդներն էլ չչարժուէին բռնակալական ռէժիմի դէմը կամ մենք նրանց կհակառակէինք ու նրանց հետ չէինք համերաշխիլ, — բնաւ երբէք: — Այսպէս, ժողովրդական միահեծանութեան հետ հաստատել և՛ աշխատանքի միահեծանութիւնը թէ Կովկասում և թէ Տաճկահայաստանում — դա մեր կուսակցական իդէալն է, որ իդէալն է բոլոր սօցիալիստական կուսակցութիւնների:

Բանի որ կայ սկզբունքների նոյնութիւն, նպատակի միանմանութիւն, տեղական կեանքից բխած փոքրիկ առանձնաշատկութիւնները ո՛չ թէ երկուստեանութիւն կարող են չառաջացնել, այլ տարբարկայի աւելի կամ պակաս աստիճանաւորում են, մասնակցականութիւն. իսկ տարբարկայական առանձնաշատկութիւնները անբաժան են կենդանի գործից աճէն տեղ և ամէն ժամանակ: Սօցիալիստական կուսակցութիւն չկայ, որ իր տարբարկայական առանձնաշատկութիւնները չունենայ:

Միջազգային Սօցիալ Դեմօկրատական սկզբունքները մեղ հող և իրաւունք են տալիս՝ միաժամանակ թէ Ռուսաստանում սօցիալիստական մեր կուլը առաջ մղելու և թէ Տաճկաստանում:

Այդ երկու վայրերում էլ կուուելով՝ մենք հակասութեան մէջ չենք:

Ս. ՍԱՊԱՆՆԻ-ԳԻՒԼԵԱՆ

**Թ Ղ Թ Ա Գ Ց Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ի**

**Ն Ա Մ Ա Կ Վ Ա Ն Ի Ց**

Տասն և հինգ օրէ ի վեր՝ տեղս ժամանած է նորընտիր կուսակալ Ալի պէյը: Գայէն առաջ՝ շատ նպատաւոր կը խօսէին իր մասին, իբր թէ զարգացած և ազատամիտ մարդ մ'ն էր: Սակայն և այնպէս դուրս եկաւ որ Ալի պէյի զարգացումը հայերը կեղեքելու ճիւղին կը վերաբերի. գալով ազատամտութեան՝ թիւրիմացութեամբ մը՝ մղեւանդ բառին հետ շփոթուած է: Ալի պէյը անբարեհամբոյր դէմքով՝ քառա-

սունն անցուցած մարդ մ'է: Մոլեւանդութեան առաջին ապացոյցը սուաւ, կիրակի օրեր դատարանները բաց հռչակելով: — Նախորդի օրով պաշտօնատուները, ինչպէս ուրբաթ՝ նոյնպէս կիրակի օրերը, գոց կը մնային, — Թիւրք պաշտօնեայի մը իսկական տիպն է, միւս կողմէ նպատակը միջոցը կարգարացնէ՝ բանաձևին դաւանող պալատական մը: Հասած օրէն ի վեր փութոյ պնդութեամբ և անօրինակ խստութեամբ մը հաւաքելու հրաման սուած է այն տուրքերը, որոնք տասն և հինգ տարիներէ ի վեր մնացած են, այսինքն՝ կառավարութեան սնտուկ մտած չեն, վանդի շատ անգամ ժամանակի հարկահաւաքներ, յանուն կառավարութեան ժողոված՝ և իրենք վայելած են, պարտքը միշտ պարտք թողլով միամիտ հարկատուին համար: Հետեւեալ միջադէպը նորընտիր կուսակալի իսկական նկարագիրը կը պարզէ: Ժամանած օրը, երբ պաշտօնատան մէջ պաշտօնական շնորհաւորութիւններ կընդունէր, քաղաքիս արուարձան համարուող գիւղերէն Կուուկաշի Ռէսը տպաւորութեան մը տակ շնորհ ընդունելու յուսով՝ խնդրագիր մը կուտայ Ալի պապային, որու մէջ բացատրելէ վերջ գիւղացոց անօթութիւնը, թշուառութիւնը ու հարկահաւաքներու խստութիւնները, բռնի ու ձրի հաւ, գառ և այլն պահանջելը, կը խնդրէ որ զիրենք ազատէ այս անտանելի բռնութիւններէն, Ալի պէյը կը պատասխանէ. «Տըղա՛ս, կառավարութեան սուրբը կամայ ակամայ պիտի արուի, ինչպիսի չէ թէ վճարող ինչ վիճակի մէջ է, ատոր խօսքը չընենք. դալով հաւ, գառ, և այլն, ձրի պահանջելուն, խորհուրդ կուտամ, որ առանց դրամի չի տար»: Եւ մեր խեղճ մարդը գլխիկոր վերադարձաւ, միայն սա մխիթարութեամբ, որ կուսակալը իրեն «աղա՛ս» բռած է, ու արտօնած՝ մահուան աստիճան մեծ ուտելու և անտորմ զապթիային ձրի ուտելիք չը տար» . . . Ալ ի՛նչ կարելի է յուսալ այս աստիճան մղեւանդ բռնակալածիտ անձէ մը: Ալի պէյը՝ Սուլթան Համիտի արքայական փէշերու տակ կորսուելու աստիճան շնորհք գտնելու յուսով և վիլայէթի երեւակայական ապահովութեան համար՝ հրամայած է նաև խուզարկել կասկածելի տուններ, որ տեղերէն թերևս թրքական մահաշունչ բանտերու տանջանքներուն սովացող հայ երիտասարդներ ձեռք բերէ, հրամայած է զարձեալ, զիշերներ մինչ ի լոյս պահակախմբեր պատել, որպէսզի պատահումներ տեղի ունենան զիշերաշրջիկ ըմբոստներու հետ, և ամբաստանութիւն մ'ալ աւելնայ վանեցուց վրայ՝ արդէն եղած անհաշիւ ամբաստանութեանց: Ու քաղաքիս աչալուրջ՝՝՝՝ ստախիմութիւնը, ուչքերը չորս բացած կը շարժուի, դեպ ո՛ւր, ինչն ալ չգիտէր, մինակ թէ ինքզինք շարժման մէջ ցոյց տայ: «Մենք կապալանք ջրի հոսելուն» — այս սուածը դեռ շատ ջուր կը վերցնէ . . .

Վանայ վիլայէթը, անտեսապէս, ամենայնա ինկամ վիլայէթն է: Վաճառականութիւնը հոս շատ սահմանափակ է և տարուէ տարի նուազելու մէջ: Հայի և ուտեստեղէններու թանկութիւնը՝ մի քանի տարիներէ ի վեր, այս դժբախտ վիլայէթի համար՝ պատահաւ, մի քրոնիկ հիւանդութիւն դարձեր է: Թէ՛ քաղաքի և թէ՛ գիւղերու մէջ՝ կալուածներու բացարձակ մեծագոյն մասը՝ ոչ-քրիստոնեաներուն կը պատկանի: Թէև ճիշդ վիճակագրութիւնը կը պակսի, սակայն կարելի է ըսել, թէ քաղաքի բնակիչներու երեք չորրորդը հայ են և մնացածը թուրք, իսկ հողի մէկ չորրորդը հայի հայերու կը պատկանի: Առևտուրը և մանաւանդ արհեստները բոլորովին հայերու ձեռքն են:

Բողոքական և կաթոլիկ միսիոնարները, պրոպագանդի տեսակետով՝ անօգուտ տեղը երկար տարիներէ ի վեր կը յոգնին: Բողոքական միսիոնարաց գործը շատ ծնի է և ցորեկօթիկ երկուս վարժարաններէ զատ՝ ունին մի քանի հարիւր երկուս օրբեր, ունին եկեղեցի, բժիշկ, դեղարան, հիւանդանոց և արհեստանոցներ: Վերջերս գերմանացի միսիոնարներ

ալ եկած են և գետին գնելով՝ որքանոց պիտի շինեն: Արդէն որքեր ունին և ամերիկեան որքերու հետ կը կրթեն:

Օտար պետութիւններէն՝ Ֆրանսիա, Անգլիա, Ռուսիա և Պարսիկ, ունին իրենց փոխ-հիւպատոսները:

Աչքի ընկնող՝ ցնցող դէպք ճը, խնդիր ճը չիայ, հիմակ ու հիմայ. սակայն ճանապարհի սպանութիւններ ու գողութիւններ սովորական բաներ են, քրօնիկ հիւանդութիւններ՝ են ճաշ-կատանի համար: Ժողովուրդը ճայր աստիճան կը ներդի հացի և ուտեստեղէններու սպութենէն, անգործութենէն և հին ու նոր տուրքերու ամենախիստ գանձումէն: Գիւղերու ճէջ հարկահաւաքները, նոյն իսկ հիւանդներու, ճննդականներու տակէն անկողիներ, կամ աւելի ճիշդ, քուրջեր քաշած ու ճախած են:

Չը ճոռնանք ըսել, որ Թահիր փաշայի պաշտօնանկութեան և նոր փախի ժամանան առիթով, թուրք երեւելիներու տուներ, թուրք յեղափոխականներու կողմանէ՝ ճի քանի յայտարարութիւններ ճգուած են. սա իմաստով, թէ «Թահիր փաշան կաշառակեր էր և երկիրը կողոպտեց, և այն, և այն: Իսկ նոր փախի քանի որ բնիկ ճը չէ, հետեւաբար տեղանկ չէ, երկրի իսկական և անհրաճեշտ կարիքներուն, ուրեմն պէտք է բնիկներ կոչուին այդպիսի պաշտօններու . . .»: Գարնան ալ՝ իբր հակահարուած էրդրումի դէպքերուն, աչքի ընկնող տեղերը թուրքերէն յայտարարութիւններ փակցուեցան: Պէտք է ըսել, թէ գարնան յայտարարութիւնը հաճեճատաբար աւելի ջղուտ ու տրամաբանական էր: Իրաւ է թէ այս յայտարարութիւնները ո՛չ ճի աղբեղութիւն չեն ունեցած և ժամանակ ճ՛ալ չպիտի ունենան. սակայն, սա նշան է, որ թուրք ներսած ճահճի ճէջ՝ ճի տկար շարժում սկսած է, և բնականաբար այդ շարժումը որ ճը փոթորիկի պիտի փոխուի:

Ահա՛, ասոնք են ճեր իրականութեան զլլաւոր գճերը:

ՄԻԻԼԻՎԱՆ

25 Յունի. 1907

Վ. Ա. Ն.

ՆԱՍԱԿ ԿԻԼԻԿԻԱՅԻՑ

Երկու ամիտ աւելի է, որ բաւականին ճեճ թուով ըէտիճ հաւաքուած է Հալէպի ճէջ, և այնտեղէն ալ հետըզհետէ կը ցրուեն Սուէտիա, Լաթաքիա, Հաճըն, — այդ բոլոր տեղերը ճորքերով լաւ ճը կամրացուեն, իբր թէ հայերու ճասին ընդհանուր կասկած կայ և կառավարութիւնը այդ կերպով գրուշական ճիջոցներ ճեռք առնելու կանխահոգը կուենայ: Կերևի նորէն չարաճիտ իտալ ճ՛ուռի իտաղիքը:

Պէյրութի ճէջ բաւականին ճեճ իստանուլութիւններ կան, կերևի թէ ճիւլիւճանական ճուլեանդութիւնը այնտեղ ճեճ ճաւալ է առած: Վերջերս քանի ճը հատ քրիստոնէաներ և և քանի ճը հատ ալ ճահճեղականներ սպանուեր են և որ ճ՛ալ շուկան փակ է մնացեր: Կըսուի թէ տեղական հիւպատոսները այդ ճասին դիճում են ըրած Պօլոց իրենց դեսպաններուն: Ստաց ըլլալ կը թուի այն տեղեկութիւնը, թէ Լեռան (Լիբանանի) ճուաքը արգիլուած է տաճիկներուն առջև:

Իստական ժամանակ առաջ՝ Հալէպէն ճեճ քանակութեամբ ճորք դուրս հանուեցաւ, դէպի Իսկէնաէրունի և Մերսինի կողմերը . . . Չորքերը նաւ նստելէ և ցամաքէն բաւական հեռանալէ յետոյ՝ երբ կիճանան թէ Արաբիա կուղարկուին՝ արաբներու դէճ կուուելու համար, կապտաճքին և ճորպախտին ու նաւապետին սպանուարով՝ Պէյրութ կը վերադառնան ու անկէ ալ շատերը կը փախչին:

ԿԻԼԻԿԵՑԻ

ՆԱՍԱԿ ԶՄԻՌՆԻԱՅԻՑ

ՍԵՑԻԳ ՊԵՎ ԵՒ ԱՒԵՉԱԿԱՊԵՏ ՉԵՐԸՃԻՆ

Ահա՛՛ դասակարգերու երկու ճայրագոյն եղեր, որոնք՝ չը նայելով իրարու ճէջ եղած՝ խոր անգունդին, կընկերանան ճիստին, հաւաքական ուճերով կեղեքելու համար տանջուած ժողովուրդը:

Սայիղը՝ հաճի Քեամիլ փաշայի անարճան որդին, կարճ, դեղեցիկ երիտասարդ ճ՛է: Իր դաստիարակութիւնը առած է Պօլիս, կայսերական պալատին ճէջ և գնահատուած պէյ. . . տիտղոսով. իսկ վերջերս՝ Չճիււնիոյ ճէջ տեղի ունեցած յեղափոխական ճեռնարկները, իր քանդիչ, աւերիչ ջանքերով ի դերև հանած և անյաջողութեան ճատնած ըլլալուն համար, իր ճատնաւոր ինամակալ Սուլթան Հաճիտէն փաշայութեան տատիճանի բարճրացաւ: Իր ճեճաղի իւղաներկ պատկերը, ճարգարուած իտայաճճամուկ ճգեսաներով և շքանշաններով՝ քանի ճը շարաթներ ցուցադրուեցաւ քաղաքիա Քրանկայ թաղի առևտրական ճեճ տուներէն ճիւլին ճէջ:

Իսկ Չաքըճին փարպետ հրացանաճիղ ճը՝ Էօտէճիշի գիւղերէն ճիւլին անուս, անկիրթ — այլ ճիւլնագաճն իր պալատական ընկերէն գերադաս — գաւակը՝ ճճ տարիներ շարունակ իր ընկերներով լեռները քաշուած աւազակութեամբ կըբաղէր և իր ճահերը, ճինչև հիճա, ճճ հարիւրի կը հասնին: Թուրք կառավարութիւնը ի ցոյցս ժողովրդին (Սայիղ պէյի կարգադրութեամբ . . .) հաղարաւոր ճորքեր, ճիւլաղիճներ և փաշաներ ճրկած է վրան, ճերբակալելու համար ճինքը, բայց ի գուր, հարիւրաւորներ ճեռած են և ճնացաճները փախտաական դարճած՝ ճեռնուանցն: Եւ ինչո՛ւ . . . Սրովհետև՝ վերև նըկարողուած պալատի իճ Սայիղը, անճամբ ճացած ըլլալով աւազակ Չաքըճիի որջը, սիրալիր տեսակցութիւն ճը ունեցած են. ճիւլացած իրարու հետ ընկերական հաստատ ուլատելով. պայճանաւ որ, աւազակը իր ճեռք անցուցած գանճերուն կէսը յանճնէ պալատական աւազակին և Սայիղն ալ ի փոխարէն, պաշտպանել Չաքըճիին կեանքը ու գորճը: Ահա՛՛ այդպէս կը ճրեն պայճանաղիբը և ճիրար կապահովցնեն իրենց խտտուճներուն ճէջ: Չաքըճին տալով անհամար ընճայ Սայիղին, իբրև փոխարիտութիւն և Սայիղ փաշան ալ իր կողմէն՝ այդ արիւնտա ճրաճներով պալատէն գնած իր շքանշանները կը թողու անոր ճաղը իբրև երաշխաւորութիւն:

Չարճանալի դաշինք, և սակայն շատ սովորական Թիւրքիոյ համար . . .

Աւազակային ընկերութեան այս պայճանաղիբը, որ գրուած էր քանի ճը տարի առաջ՝ Էօտէճիշի լեռնագաղաթներուն վրայ — որուն նպատակը պիտի ըլլար ար իււն և արղիւնքը ոսկի, այդ ճրաղիբը՝ ճարճանալի ճարպիկութեամբ 4ճ տարի շարունակ շահագորճուելէ վերջ, առևանգուած իտաղցի ճը ճարպիկութեան շնորհիւ՝ կերթայ կայսերական պալատ կամ դատարան, հոն, ուր քանի տարիներէ ի վեր — ճանաւանդ վերջերս կայսեր ճահափորճին աղաղկներու դատավարութեանը ճէջ — ճահուան, կախաղանի վճիւններ կըստանան հայապատանին՝ հայճարտիրոսը՝ կամ հայհերոսը՝ Անճտութիւն է սակայն, աւազակներու այս ընկերութեան դատավճիւններուն սպասել. քանի որ պալատը ինղիբը ճարգրուած գիտէր արղէն. աւազակային այս ճեռնարկը և ինքը շահբճին ունէր անկէ: Մէկ խօսքով այդ աւազակային ընկերութիւնը պալատական էր, քանի որ Սայիղ պէյն պալատական ճատանիով կըբուած էր:

Այլ սակայն պալատը իտաղական հիւպատոսարանի բըրբոճներուն վրայ ստիպուած — ճիւլաճիտ անղիտութեամբ կը ճարճանայ եղաճին վրայ և ընդ փայթ կը հեռաղբէ պաշտօնապէս վիւլայէթիս հաճի Քեամիլ փաշային՝ յայտնելով որդույն աւազակային գորճերը: Մերունի փալին՝ ի պատաւաճան՝ ատոր՝ հետևեալը կը հեռաղբէ իր կողմէ պաշտօնապէս թէ, «Սայիղ փաշան իճ տղան է. այլ սակայն պալատին ալ



դաւակն է: Ի՞նչ տղուն դաստիարակութիւնը պալատը տուա՛ւ Պալատը և Սուլթանը քաջարեցին ի՞նչ տղուն աւագակու-  
թիւնները, զի ճի քանի ամիսներ ծիսին անցան այն օրէն:  
որ թագաւորը, Սուլթանը, փաշայական աստիճանով պատ-  
ւեց ի՞նչ տղուն — Հակառակ կամքիս — ես բոլորովին ձեռքն-  
պահ էմ այդ ճասին:”

Սոյն ազգու և յանդուզն հեռագիրը կը ցնցէ Սուլթանի  
հետ ամբողջ պալատականներն անխոր — անաճօթները  
կամչնան — կը փրփրին, կը կատղին և խոխոյն կը հեռագրուի  
Զմիւռնիս, որ վալին անմիջապէս Պոլիս բերուի. բայց անվի-  
ական հիւպատոսը, որուն պաշտպանութեան ապաւինած էր  
վալին, կը պաշտպանէ և իր հիւպատոսարանին մէջ ժա-  
մանակ ճը կը պատուէ իր յարգելի հիւրը: Պալատը քանիցս  
կը խնդրէ հիւպատոսարանէն վալին, բայց հիւպատոսը, զօ-  
րաւոր և ազգու ճիջոցներով կեանքի ապահովութիւն առ-  
նելէ վերջ ճիւղն, անզիտական պաշտպանութեամբ ու ճի-  
ջոցներով կը դրկէ իր հիւրը՝ դէպի Պոլիս անզիտական դես-  
պանատուն:

Ահա՛ թիւրքիոյ ըէժիմին պատկերներէն մին ալ:  
Պաշտօններու մէջ իր ճագերը ճերմկած նախկին եպարզոս  
ճը, վալի ճը, այսօր զո՛հ կերթայ, իր մէջ կուտակուած  
արդար զայրոյթի պութկուծին. իսկ նոյն հօր անարժան  
զաւակը, պալատի աշակերտ Սայիդը, պատկերներու և բարձր  
աստիճաններու կարծանմանց: Թո՛ղ վար անցնի վատը, իր  
հօր դաւաճան սրդին, Զմիւռնիսայի, Մադնիսայի, Գասապայի  
հայ օճախները ճարճող աւագակը՛:

Եթէ այսօր, Երբաղը՛, խաւար Երբաղը՛ չը դատէ իր ա-  
ւագակ պաշտպանեալը — ինչոր յայտնի բան մ’է — վաղը ճշմար-  
տութիւնը, արդարութիւնը, հայու ճշող ճանուկներու շըր-  
թունքներով, պիտի դատէ զնա: Նոյն ինքը խլամ պալատը,  
պատուհա՛սը, ճիթէ՛ կը կարծէ, որ պիտի տեսն իր նենգաւոր  
զաղտնիքները երկար: Միթէ՛ . կը կարծէ, որ իր զինուոր-  
ները — որոնք Սուլթանի զրօշը ուսերնին առած կը վազեն  
դէպի կուռի դաշտը, մահ ստանալու համար նոյն այն զրօ-  
շէն, — պիտի մնան անգէտ պալատական այդ դոխալայն գաղտ-  
նիքներուն:

Ժահրալից պալատի զաւակը կամ աւագակը Սայիդը և  
իր ընկերութեան ներկայ պատուակալ նախագահ Ապտիւլ  
Համիդը և ճիւս շահաբաժին պալատական խայտաճամուկ  
զգեստներով գայլե՛րը, ճիթէ՛ կը կարծեն, որ իրենց արտա-  
քին փայտիանքով շփշփելով Եւրոպան՝ կրնան լռեցնել  
ճշմարտութիւնը, վրէժը և հայ գաւակները . . . :

Միթէ՛ մեր խեղճ եպիսկոպոսները կամ վարդապետները կը  
կարծեն, որ Սուլթանի իրենց կուրծքը կախած շքանշաններով  
բեժ, խորան, ելլելով և Համիդը փառաբանելով կարծանման  
կայտերական տեսական պաշտպանութեանց: Եւ միթէ՛ կը կարծեն  
անոնք, որ ճենք կը հետեւինք իրենց խեղկատակութեան: Միթէ՛  
կը կարծեն մեր ճասնիչները, որ իրենց վատութեան փոխան իրենց  
մէջքին, Սուլթանի կախած սուրը, որ ճը չպիտի կտրէ իրենց վիզը:  
Կորչին վատե՛րը, չը յարգուին թող անոնք, և ինչո՛ւ յար-  
գենք այդ մեժ կոչուածները, քանի որ անոնք աւագակութեամբ  
ճիւղն մեժ են, չկա՛յ խարութիւն ո՛չ Սուլթանին և ո՛չ ա-  
նոր սիրելի եպիսկոպոսներուն մէջ . ինչպէս որ չկայ խարու-  
թիւն ո՛չ Սայիդ փաշայի և ո՛չ աւագակապետ Չաքըճիին  
մէջ: Անէ՛ճք ասոնց, վրէ՛ժ ասոնց, փոխան իրենց անմեղ  
զոհներուն. ահա՛ մեր յարգանքը, մեր ո՛վատը:

“Այսքան արիւն թէ ձեզ ներքեւ մեր սրդիք,  
Թո՛ղ ողջ աշխարհ հային կարգա՛ նախատինք . . .”

ՇԱՀԷՆ

2 Փետր. 1907  
ԶՄԻՒՌՆԻԱ

**ԹՈՒՐԿ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՀԱՅ ԳՊՐՈՑՆԵՐԸ**

Այսօր ունինք բաւականին թուով վարժարաններ թէ՛  
Պոլսոյ, թէ՛ Փարս-Հայքի և թէ՛ ճամուտորապէս Հայաստանի  
մէջ: Արքան որ ուրախալի է եղած եռանդուն զորճուէնու-  
թիւնը վարժարաններու նկատմամբ, բայց աւելի քան ցաւալի  
է, օսմանեան բունակարութեան վերաբերումը դէպի կրթութեան  
այդ հնոցները:

Քանի ճը իրողութիւններ. — Պայագլիսի և Խնուսի գա-  
ւառներուն մէջ՝ տեղական իշխանութիւններու կողմէ՛ ամէն  
տեսակ սպառնալիքներ կ’ըլլան ուսուցիչներուն, որոնք, իբր  
թէ, յեղափոխութիւն կը քարոզեն և յեղափոխականներ կը  
պատրաստեն: Զապթիչները յաճախ ուսուցիչներուն տինն  
ու իմանը հայհոյելէ յետոյ՝ կարգիլեն զարոց երթալ:  
Արարք ճը՝ որ իսկապէս կը ջլատէ ուսուցիչներու ուժերը,  
որոնք կը ջանան ուսում տարածել այդ մութ անկիւններուն  
մէջ, ուսում որ կարգալ գրելէ ու թուաբանական պարզ  
հաշիւէ կը բազկանայ: Արպի՛սի բունակատութիւն, որ անարգ  
զապթիչէ ճը, իբր թէ, յեղափոխութիւն քարոզողներ են ըսե-  
լով՝ Դարաջօպանի, Կօվանդուկի, Քալքիլի և այլ շատ  
գիւղերու ժրջան ուսուցիչներուն կը հայհոյէ, կ’անարգէ  
և սպառնալիքներ կ’ընէ:

Այդ կարծես դեռ հերիք չէ, թիւրք պատանիները կը զըր-  
զըռեն, գիւղէ գիւղ գնացող հայ դպրոցականներու ճամբան  
բունելու և փայտով ու քարով ճեճելու ու անոնց գրքերն  
ու տետրակները յափշտակելու:

Դեռ շատ հեռու չէ այն իրողութիւնը՝ թէ ինչպէս Խը-  
նուսի Դարաջօպան գիւղին մէջ զապթիչէ ճը՝ վերին իշխա-  
նութիւնէն հրահանգուած, յաճախ ամենակոշտ անկրթութեամբ  
և հայհոյանքներով վարժարանի դասարանները կը ճանէր, ու-  
սուցչին թեւադրութիւններ ընելու և ունկնդրելու համար դաս-  
աւանդութիւններուն, որոնցմէ ոչինչ կը հատկնար:

Բաղէշի երեք տանաարեան ուսուցիչները՝ ամենախիտ  
սպառնալիքներու և հակողութիւններու տակ էին . . . , որով-  
հետեւ յեղափոխականներ կը պատրաստէին: Երբ անոնցմէ  
երկուքը Կարին վերադարձան, վայրկենապէս բանտ առաջ-  
նորդուեցան «Բիթլիզի խօճաներ» ըլլալուն համար:

Մշոյ բարբարոս աստիկանութիւնը՝ ստէպ կապառնայ  
Ազգային վարժարանին, շատ լաւ գիտնալով՝ որ երկու  
թերթ թղթէ ու մէկ գրէէ վատ ոչինչ չկայ հոն. այսպէս կը  
վարուին ուսուցիչները վարանեցնելու և յուսահատեցնելու՝  
«Ֆեդայիութիւնը» հարածելու պատրուակով:

Ահա՛ թէ ի՛նչ պատասխան տուած է թուրք ըէժիմը  
հայ վարժարաններ շատցնելու ճորքին ու զորճուէնութեան:

Տրապիզոնի քօմիտէրները միշտ իրենց ձեռքի տակ ու-  
նին զպրոցական կարգ ճը շրջանաւարտներու խմբակարգը,  
որովհետեւ անոնք ուսուցիչ պիտի ըլլան և, հետեւաբար, թուրք  
արամաբանութեամբ յեղափոխականներ պատրաստողներ: Եւ  
այսօր Տրապիզոնի վարժարանին շուրջը տանակներով կը  
շրջին և խիտ հակողութեան տակ կը պահեն:

Շապին Գարահիսարի մէջ, աղքատ ժողովրդի վերջին  
լուճաներովը պատրաստուած կիսաշէն վարժարանի կմակքը՝  
ճիւղին ու անճիւղին տակ կը փտտի, տարիներէ ի վեր, յու-  
րակութիւն թիւրք կառավարութեան: Ահա՛ բայցսո՛շ ա-  
ւարկութիւնը. — եթէ շինուէր շէնքը՝ ամենաբարձր դիրքը  
պիտի ունենար քաղաքին մէջ, մինչև՝ Թամգարայ գիւղա-  
քաղաքը կարելի պիտի ըլլար տեսնել և յեղափոխական-  
ներու բոցն պիտի գտնար և թապեա պիտի ըլլար:

Արդ, անթիւ օրինակները պերճախօս են օսմանեան բընականութեան ճիտումները գիծակաթափերս: Ահա՛ վարպետը, զպրօցանքներուն կեղծերուն մէջ, որ արդիւնէս ճիշտներուն մէջ կ'ս աւելի անհամեմատ վարպետ է:

Անշուշտ կառավարական արգելքները գլխաւոր խնդրանքներն են արգելքներէն ճին են զպրօցներու յառաջադիմութեան համար, բայց չի ծառնանք աւելցնելու կ'այն, որ զպրօցներու մէջ ուսումը դեռ կառանգուի հնացած մէթոդներով, զպրօցը, կաշկանդուած լինելուն համար՝ դեռ շատ հեռու է խիական և պարտաճանաչ սերունդ արտադրելէ, քանի որ հայ զպրօցները և անոնցմով պարագրները դեռ այդպիսի պայմաններու տակ կը գոնախն:

ԲԱՂԱՔ

ԹԿՆԱՏ-ՊԱՆԱՍՐ

### Ս Ի Բ Ա Յ Լ Ե Ի Ս

Վարպէ է որ ճիապետութիւնը մտածում է գտնել այնպիսի միջոց, որով ճի անգամ ընդ միշտ վերջ գրուի Ռուսաստանի ներքին ժողովրդական դժբախտութեան: Նա ձգտում է «կարգը» պահպանել:

Կարգը, կարգը ամենից առաջ — յետոյ կարելի կլինի բարենորոգումներ մտցնել, — շարունակ ատում է բերուկրատիան՝ այդ բառի իմաստի տակ ի հարկէ հասկանալով հին կարգերի անաղարտութիւնը: Իսկ կարգը պահպանելու համար գիծում են ճի միջոցի, խտտութիւնների և արտակարգ օրէնքների պաշտպանութեան:

Իս ի հարկէ նոր եղանակ չէ: Դեռ Ալեքսանդր Բ-ի սպանման փորձերից յետոյ Պետերբուրգի և մոսկուայի գլխին գրեթէ անընդհատ ճանրացել է սաստկացրած պաշտպանութիւնը: Վերջին երկու տարին, երբ սաստկացրած պաշտպանողական դրութիւնն էլ բաւարարութիւն չտուեց, մտցրին արտակարգ պաշտպանութիւն. դա էլ չտուեց պատուած արդիւնքը, մտցրին պատերազմական դրութիւն, իսկ երբ այդ էլ չէր կարողանում խաղաղեցնել երկիրը, ճիապետութիւնը անցաւ պաշարողական դրութեան:

Աւելորդ է ասել, որ այդ ձևերի հետ սերտ կապուած են առանձին՝ պատերազմական կոչուած օրէնքներ, պարտադիր հրահանգներ, ձերբակալումներ, խուզարկութիւններ, աքսորներ, բանտարկութիւններ, լրագիրների խախտումներ, կախազաններ, և այլն:

Ի հարկէ այդ բոլոր խտտութիւնները վարպէ արգէն փորձած և կեանքի մէջ գործադրած են, այլևս ուրիշ բան չէր մնում անելու — սակայն «հնարագէտ» ճիապետութիւնը փորձում է ճի քայլ ևս առնել: Նա կամենում է այժմ Գուճայի հասանութեամբ օրինական ձև տալ այդ բարբարոս խտտութիւններին:

Իս է այն քայլը, որ այժմ առնում է բերուկրատիան: Ներկայ ճնշումներին օրինական ձև տալու համար՝ շատ են մտածել «չրջաններում»: Երկար ժամանակ զրուի է ցաւացրել այդ աւթիւ տխրահոգ Իգնատև և նախկին պրօկուրոր՝ Պաւլովը, իսկ 1904 թ. դեկտեմբերի 12-ից կազմուած է զանազան վարչութիւններից խառն յանձնաժողով, որը մշակում է արտակարգ դրութեան համար օրէնքի մի նոր նախագիծ:

Նորերս այդ նախագիծը պատրաստուեց և այժմ ներկայացրած է նախարարների խորհրդին: Իսկ ներքին գործոց նախարարը մտադիր է այդ նախագիծը ներկայացնել երկրորդ Գուճայի խորհրդածութեան և քննութեան:

Ինչպէս տեսնում էք, զորքում են և անպուլ աշխատում: Չենք սխալուած լինիլ, եթէ ասենք, որ ճի շարք օրէնքների մէջ, որոնց մտադիր է նախարարը առաջարկել Գուճային, — յիշեալ արտակարգ օրէնքը բռնում է առաջնակարգ տեղը կառավարութեան աչքում:

Մինչև այսօր իրաքանչիւր գնեկրալ նահանգապետ կարող էր իր հայեցողութեամբ սահմանել այս կամ այն պատիժը, բայց այժմ այդ չի կարող տեղի ունենալ և կամարիլայի համար ցանկալի էլ չէ, որովհետև կասկածներ կան, որ շատ իշխանաւորներ խուսափում են յայտնի խտտութիւններից: Այժմ իւրաքանչիւր քայլի, ամէն մի դէպքի համար ընդգծած որոշ օրէնք, յայտնի ցուցմունք:

Ահա թէ ինչպիսի միջոցներով է գինում ճիապետութիւնը յեղափոխութեան դէմ, ահա թէ որ աստիճան մտահանջութեան առարկայ է դարձել կառավարութեան շրջանների համար ներկայ ազատագրական շարժումները: Նոր ծրագիրը, եթէ միայն ստանայ օրինակահետքիւն Գուճայում, որը դէպ ասած կասկածելի է, ոչ մի նոր բան չի բերում մեզ համար: Մինչև այժմ ինչո՞ր եղել է, նոյնը կլինի և օրէնքը հաստատուեց յետոյ: Բայց այդ մենք հաւատացած ենք, որ այդ օրէնքը չի ընդունուիլ եթէ նոյն իսկ պահպանողական Գուճա էլ լինի: Սակայն այդ վերջին քայլն էլ ցոյց է աւելիս, որ կառավարչական շրջաններում այլևս ո՛չ մի միջոց չի մնացել, որ ուժեղացնէր կուռի գէնքը նրա ձեռքում: Իսկ դա ուրիշ խօսքով նշանակում է, որ ժողովրդական շարժման զարգացումը կանգնել չգիտէ արհեստական արգելքների և խտտութիւնների առաջ: Յեղափոխական շարժումները ունին որոշ օրէնքներ, պատմական յայտնի խթաններ, որոնց կանգնեցնել չեն կարող ո՛չ մի արտակարգ օրէնքներ: Շա՛տ-շա՛տ նախարարները կարող են զանազանցնել ազատագրական գործի յաղթանակը, բայց և հէնց այդ հանգամանքը ի նպաստ շարժման կլինի:

Որքան ուշանայ յեղափոխութեան վերջին հարուածը, այնքան ուժեղ թափով կհարուածէ նա ճիապետութեան:

ԺԱՆԻԹ

20 Յունուար 1907

### ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ՊԱՐՏՈՒՄ

Պարտատուանի «մէշրութեան» կամ «սահմանադրութիւն» ը իր երկրորդ ֆազիսի մէջ մտաւ, անցեալ թուականի նոյ. 21-ից: Նոյ. 21-ը այն պատմական օրն էր, երբ ձշտարթուն թագաժառանգ Մամաւ-Ալի-Միրզան մեկնեց Թաւրիզից Թէհրան, այնտեղից խիտած ստիպողական հեռագիրներով պահանջով:

Ատրպատականի շարժումներին ամն առող թաւրիզի՝ «անձօճօճանը» կարծես մի րոպէ իրեն կորցրեց թագաժառանգի Թէհրան մեկնելը տեսնելով, (\* ուստի շտապեց ամենայն խտնարհութեամբ և պարտ ու պաշաճ եղանակով նրան ճանապարհ գնելու: Իս մի քաղաքակաւմութիւն էր, որ նախատակ ունէր սիրաշահելու անողք թագաժառանգին և ի ցոյց հանելու այն պատրաստակամութիւնը, թէ Թաւրիզի «անձօճօճան»-ը, լցում է առ գահն ունեցած հաւատարմութեամբ:

Բայց երկուն էլ միմեանց լաւ էին հասկանում: «Անձօճօճանը» առ երևոյթ իր խոնարհութիւնը երևան հանելով, կարծես ատում էր արքայազնին, թէ շո՛ւս հեռացիր, որ շուտ ազատուեք քո ճնշող ներկայացուցիչներից, որովհետև այլևս հրամանատարութիւնը մեզ է պատկանում: Իսկ ճաւաչադէմ Մամաւ-Ալի Միրզան իր հրամեշտի ցամաք խօսքերով պարզ հասկացնում էր, որ իր իշխանութեանը զուգակցելու չէ որ և է ժողովրդական ներկայացուցչութիւն կամ «անձօճան»:

Եւ իրօք, ճնայած յամառութեամբ շրջող այն լուրերին, թէ Թէհրանի «անձօճան»-ի հետ միաբան է Սալար-էղ-Գոյլէն և Ծաւ-էս-Սալթանէն 40 հազար զինեալ ճարդկանցով սպառում են թագաժառանգին, նա բռնեց Թէհրանի ճանապարհը:

\* թիւ մի գուցէ Թէհրան հասնելով հրամայի ցրել անձօճանը:

պարհը, հետն ունենալով Գարատուղի պատուհաս ձիաւորներ, թնդանօթածիրներ և հետեակ զինուորներ, թուով ընդ ամենը 5000: Վճռական թագաժառանգի առաջ ճարտարապետը բացեց իր դռները, որտեղից նա անցաւ չափնուած փառքով: Մտաւ քաղաք միայն նախապէս ստորագրելով «Իր հօր շնորհած սահմանադրութիւնը»:

Գեղեմեքեր 12-ին հեռագիրներէն և թաւրիգում հրատարակուող բազմաթիւ պարտիքէն թերթերէն իմացանք, որ թագաժառանգը հանդուցեալ հօր կողմէն կարգուել է աւելուած գրուի և վարելու է պատասխանատու գործերը սաղարազամի հետ միասին: Առանձին հրճուանքով չընդունուեցաւ այդ լուրը թաւրիգում, որովհետեւ հէնց այստեղ թագաժառանգը յայտնի էր իբրև հակասահմանադրական:

Եւ իբրաւ, բարեմիա Մօզաֆֆէր-էղլին ճահի ճահուանից յետոյ՝ թէհրանի «անճօճան» իր նախկին յաղթական նուաճումների մէջ չէր: Պալատը օրերով յետաձգում էր «անճօճանին» տալիք պատասխանը: Բայց «անճօճան»-ը, որ իր յետևում ունէր ճարտարապետի ժողովուրդը, վրէժխնդիր եղաւ այդ վիրաւորանքին և յառաջ բերաւ գեղեմեքերեան 3-օրեայ գործադուրը:

Այդ արդէն անպատելի էր և նոր դահ էրած արքան առանձին մի գրութեամբ, որ լոյս տեսաւ թաւրիգի թերթերում, հաւատարմացում է «անճօճան»-ին, որ մի կարգ «չարամիտների» սարածած լուրերին չալիտի հաւատալ, որովհետեւ ինքը գիտէ Ալլահը, պաշտպան է «մէշրութէ»-ի: Այս գրութիւնից յետոյ՝ «անճօճան»-ը առաջադրում է Մամառ-Ալի շահին ձշակուած օրէնսդրութիւնը ի հաստատութիւն: Հաստատութիւնն ուշանում է և դորան յաջորդում է մի նոր գործադուր, որին հետևում է թաւրիգը:

Բարգութիւնների առաջն սունեյու համար, օրէնսդրութիւնը կամ «նիգամ-նամէն» ստորագրում և դարձնում է «անճօճան»-ին: Իսկ ուշացուիլը բացատրում է նրանով, որ «օրէնսդրութեան մէջ ինչ-ինչ փոփոխութեան արժանի կէտեր կային: Յաջորդական այսպիսի յաղթանակներից յետոյ, անճօճան»-ը պահանջեց շահից հեռացնել պալատից մի շարք մարդկանց, որոնք հէնց թաւրիգիցներից ատուած ու հալածուած են, մինչդեռ այսօր պալատական ֆալօրիտներ են:

Իրերը այս գրութեան մէջ էին, որ յանկարծ՝ յունուար 24-ին պայտուած ճահի վրայ է յարձակում զաշխով և ստորճանակով զինուած մի սէլիք: Վրայ են պրծնում Ալլահ-գար-բաշին և այլ պայտուակներ, պատառ-պատառ անում սէլիքին, որի հարուածներից անկասա էր մնացել երիտասարդ ճահը:

Չայրացած այս դէպքից, ինչպէս լսեցի, ճահը «անճօճան»-ի աղբիջիկ անդամներից մէկի ձորուքն է կորել տալիս, միւսին սպանում և ցրում «անճօճան»-ը: Կայծակի արագութեամբ նոյն օրը երեկոյեան (յունիվ 24) լուրը հասնում է թաւրիգ, բոլոր խնամութիւնները փակուած են և յաջորդ առաւօտեան, ազգաբնակչութիւնը թափուած է հեռագրատուն: Թէհրանից պատասխան չի գալիս: Այսպէս անցնում է 2 օր: 27-ին լուր է ստացում, թէ ճահն ասում է «մէշրութէ չկայ, դատուել է հայրս ճահուան անկողնում, ուստի ես չեմ ճանաչում ո՛չ մի «անճօճան»: Սորանից յետոյ՝ 27-ին (շաբաթ) հայերի խնամութիւնն իսկ փակեցին թուրքերը և տիրեց մի ընդհանուր ճեղքութիւն: 28-ին գրաւեց ժողովուրդը թաւրիգում արսէնալը (գորխանէն),\* տէրութեան գլխաւորունը (ղաթարխանէն), «թէղքերէխանէն» և հեռագրատունը: Ուրիշ խօսքով՝ քաղաքը այժմ ժողովրդին ձեռքն էր: Թէհրանի «անճօճան»-ը նեղ գրութեան մէջ էր, թաւրիգը նրան օգնութեան հասաւ, գործադուր յառաջ բերելով Քերմանշահում, Երզրում, Շիրազում, Բուշիրում, Քերմանում, Սպահանում և այլ շատ քաղաքներում: Այլ ելք չկար, մնում էր

\*) Գորխանէն որտեղ վառող և այլ ռազմագործը է պահուած:

էլի զիջումների ճամբան բռնել: 29-ի երեկոյեան եկաւ հեռագիր, որով ճահը զիջելով ժողովրդի թախանձանքին, ընդունեց նոր պահանջը: Արդէ այստեղ շէշուել ճահի պատմական խօսքերը, «ես այս շնորհն արի, յարգելով յատկապէս խնդիրը թաւրիգի, որը իմ շապիկս եմ համարում և իմ հաւատարիմ քաղաքը, ուր անցել են իմ վիշտն ու ուրախութիւնը իմ սիրած ժողովրդի հետ»:

Փրակը միշտ մնում է Ֆրաղ: Իրողութիւնն այն է, որ թաւրիգում հեռագրատուն, զինարան, դիւանատուն և անցագրերի դիւան գրառուելուց յետոյ՝ կառավարութիւնը պարտուեց և զիջեց ժողովրդին: Մարտատունն էլ այդ օրերում անգործութեան էր դատապարտուել, որովհետեւ որոշուած էր, ով որ յանդիմի ապրանք դուրս հանել, կապանութիւն և ապրանքը կխալանութիւն: Ահա, այս երկիւղից ապրանքի գնացող չէր կրնում, որով և մարտատան պաշտօնեաներն էլ մնում էին իբրև կամուտ բանտարկեալներ:

Այժմ ինչպէս թէհրանում, այնպէս էլ թաւրիգում ազատ գործում է «անճօճան»-ը և de facto Խարպատակնում կառավարութիւն գոյութիւն չունի: Ամէն ինչ կեդրոնացած է «անճօճան»-ի ձեռքում:

Մինչդեռ անցեալ տարի այս ժամանակ միայն հազիւ լիարը 12 դռնով, շաբաթը 7-12 դռն էր ծախուած և հազիւ էին ձեռք բերում, այժմ շնորհիւ «անճօճան»-ի միայն 6 դռն, շաբաթը 5 դռնով առնում է, աման է նոյնպէս հայր: Ահա՛ հէնց այս ամանութեան համար է, որ ամէն ուրեք «անճօճան»-ները ժողովրդից պաշտպանութիւն են գտնում: Հայերի դէմ ո՛չ մի փոփոխութիւն չի եղել: «անճօճան»-ն էլ կառավարութեան պէս սիրալիկ է դէպի հայ ազգը, որին թուրքերը «վաթան դարգաշի» են անուանում:

Թէպէտ և «անճօճան»-ի ձեռնարկութիւնների մէջ կրօնական ոգի է իշխում, բայց դեռ ևս վերջնականապէս չի կարելի բնորոշել նրան, քանի որ դեռ իր սարձայնի դրութեան մէջ է նա: Բայց մենք կցանկայինք, որ իսկական սահմանադրութիւնը իբրև արեգակ ծագէր խաւար Պարսկաստանի վրայ և առանց ազդի ու կրօնի խտրութեան ազատութիւն տար ամէն մէկին ըստ կարողութեան առաջադիմելու և ճառագելու ընդհանուրին:

Տ Փեար.

\* \* \*

ՍՏՐՈՒՎ ԺՈՂՈՎՈՐԻՒԸ ԸՄՐՈՍՏՆՅԱԾ

Այս անցած ամիսներում, ինչպէս և ձօնով օրերում, Պարսկաստանում մեծամեծ քաղաքական դէպքեր կատարուեցին: Եւ այդ դէպքերը միանգամայն անպատելի էին այսպիսի մի երկրում, ուր ժողովուրդը համարուել է մի գրաստ, որը, որ պէտք է գալարուի «աշխարհի ազօթարանի» (\* ոսկերի տակ, անմշուի զիշեր ցերեկ և անխօս լեցնի ճահերի գանձարանը, հարեմը բազմացնելու՝ չափնուած բազոտական վակիլանալիաներ սարքելու համար: Խաւար դարերի բերտ դատարարութիւնը արժատացրել է ճահեղական այս ժողովրդի մէջ այն սարկական գիտակցութիւնը, թէ իրենք ոչ այլ ինչ են, քան իրեն «խաբէ փայէ մօբարէք» (օրհնեալ ոտքերի փոշին, հողը): Պարզ է սերմն այսքանից, որ անմտութիւն կլինէր Դարեհների այս գառածեալ երկրում որ և է ժողովրդական ցոյց, ապրտածբական նշան, ընդզման փորձ և ազատասիրական ինչոր մի շարժում առաջ բերել: Եթէ երբ և է եղել են բոլորի աննշան արտայայտութիւններ կամ անմեղ ցոյցեր, այն էլ սովորաբար հայցի կամ մտի թանկութեան պատճառով, ապա այդ «չարածճիւղութիւնները» պատժուել են ինքիլիխտորական ամենահրէշաւոր եղանակներով:

Բայց... O Tempores, O Mores Անցան ժամանակներ... վերջապէս և Պարսկաստանն էլ իրեն թափ տուեց և մի քիչ օդ ուղեց աղաւ շնչելու համար: Եւրոպացիների ճուտքը Պարսկաստան, եւրոպական բանկային և առևտրական հիմարկութիւնները Պարսկաստանում, հայ վաճառականների շփումը օտարների հետ, և այլն, փոխեցին պարսիկ և նոր հորիզոններ բացին նրա առջև: Պալատը եկաւ լրացնելու

\*) Դըքըլէյի ալէմ աշխարհը աղօթարան: Պարսից թագաւորների անականներից:

Ռուս-Ջապոնական պատերազմը և ճանաչող Համառուսական ճեմ յեղափոխութիւնը, որը պարսիկներին վարակեցով՝ դրեց նոցա այն ճարտական դերի մէջ, ուր ճենք տեսնուած ենք նրանց: Երևոյթն ուրախալի է և փրկարար, եթէ միայն կրօնական ոգին չգայ իր յետադէմ դերը խտրաբար:

Ինչ որ է, այսօր ճենք տեսնուած ենք մի ճարտնչող ժողովուրդ, մի թոյլ, բայց դիպրօմատ կառավարութիւն, որոնք յանկարծ դէմ առ դէմ եկած՝ ճակատերու են պատրաստուած:

Բայց երկուստեք էլ նկատուած է անկատաճութիւն, ոյժերի պակասութիւն, ու զիջողութիւն և ո՛չ մի կողմից: Սակայն ցարդ գերակշռութիւնը եղել է միշտ սարուկ բայց արդէն ընթատացած ժողովրդի կողմը: Չլուսեցով Հանգուցեալ Հայաստէր Յաճի ճախն, որ ինչ ուզել են տուել է բարեմտաբար, յիշեմ նոր շահից երկու դէպք, որ կպարզի ու կհաստատի ասածս:

Թէհրանից Հրաման է գալիս՝ տօնել լուսավարութեամբ, Մաճառ-Ալի Յաճի գահակալութիւնը: Նորեկ նահանգապետ նիզամ-օլ-ճօլքը ճանեափիկներով այդ ճախն յայտարարութիւն է անում բազարում: Անցնում է մի շաբաթ և ո՛չ մի լուսավարութիւն: Նահանգապետը խորտակուած է: Անգամ Թաւրիզի «անճօման»-ը «խիտո նկատում» է նահանգապետին, թէ ինչո՞ւ առանց իր հաճութեան և կանխագիտութեան արել է այդ յայտարարութիւնը: Գահակալութիւնը տօնուած է Թաւրիզում և այն էլ «անճօմանի» հրամանով, երբ այդ ճախն Թէհրանի «անճօմանից» հրահանգ է ստացում: Նահանգապետի պարտութիւնից անցնում է 20 օր և նորից նահանգապետը, ըստ Թէհրանի հրահանգի, հրամայում է տօնել նոր շահի թագադրութիւնը: Կատարեալ ֆիալիօ: Անցել է ամսից աւելի և չի տօնուել թագադրութիւնը պարսիկ և թուրք ժողովրդի կողմից: Սա արդէն չտեսնուած երևոյթ է պարսից տարեգրութեան մէջ: Առաջ ո՛չ միայն նահանգապետի, այլ և ամենարքայ և ճպրտա ֆարաշի հրամանը անդմապրելի էր: Իսկ այժմ չի յարգուած թագադրութիւնը այն շահի, որ վախճա՞ց ժամանակին ա՛հ ու սարսափ էրհանուր ատրպատականի համար: Դեռ կառավարութեան պարտութիւնն աւելի աջքի ընկաւ այն ժամանակ, երբ Թաւրիզում ժողովուրդը գլխաւոր պետական մի քանի հաստատութիւններ, որոնց ճախն յիշել եմ նախորդ թղթակցութեանս մէջ:

Այդ անողը երէկուայ սարուկ ժողովուրդն է, որ այսօր ընթատացած իր հզօր ձայնն է հնչեցնում . . .

ՆՈՒՇԻՐՈՒՄ

11 Փետր. 1907  
ԹԱԻՐԻԶ

ԱՐՁԱԿԱՆՔ ԿՈՒՐԱԿՆԵՐ

ՅԵՂԱՓՈՒԱԿԱՆ ԸՆԿԵՐՆԵՐ

Ճարիներ առաջ Հայ ժողովուրդը ուրախութեամբ քեզ տեսել և ըստմենոր լսել է. իրեն համար սրտի միջխարութիւն, լուսավարութեան նեցուկ, ընթատացումի խթան էին քու խօսքերը: Այսպէս, մինչև 1895-1896-ի կատարածները՝ յեղափոխականը մի հմայք ունէր ժողովրդի առաջ:

Կտորածներէն յետոյ՝ ժողովուրդը աչքը դարձուց դէպի արտասահման, և այստեղ, ահա, տիրեց հիասթափութիւնը, — կուսակցական կուրսերը, տեղի ունեցող խռովութիւնները, և փոխադարձ մերկացումները, իրար հալածելը և թշնամական դործերը, տիրող անհամերաշխական արարքները, այդ բոլորը միանգամէն հմայաթափ ըրին ու տիրեց կասկած, աստուծութիւն ի՛սկ դէպի յեղափոխականը, իրերէկուայ պաշտածը, իր երէկուայ յուսարիչը:

Անցան ամիսներ, տարիներ, ժողովուրդը սպասեց, յուսարով որ արտասահմանի մէջ գործողները վերջապէս խեղքի կուզան և կաշխատին փոքրիկութիւնները մոռնալով՝ բարձրանալ դէպի վեր և ժողովրդի տանջանքին դարձան տանիլ — բայց այդ յոյսն այլ ի դերե կաւ:

Վերջապէս այս օրերս մեզ համար ծագեց յուսոյ նշույլը: Մեր ամէնէն սիրելի Մուրատի «ԱՒԵԼԻ» ԼԱԻ Է ՈՒՇ, «ՔԱՆ ԵՐԲԵՔ» խմբագրականը եկաւ բերու թէ՛ դեռ բոլորովին յուսահատու չենք: Ի՛նչ ըսեմ, «Հնչակ» ի այդ թիւը ձեռքէ ձեռք

կանցնէր և կը համբուրուէր. մէկը չկար որ համաճիտ չըլար արտայայտուած մտքերին և իր սրտին խորքէն չզգար թէ մեր մէջ գործող կուսակցութիւնները միութիւնը կամ համերաշխութիւնը որքա՛ն անհրաժեշտութիւն էր Հայ ժողովրդի տառապանքի վերացմանը համար:

Յեղափոխական ընկերներ, Գիտցած եղիք, որ Հայ Յեղափոխական Գօնիկէսի գումարումը և դրական արդիւնքի մը համար, ո՛չ միայն մեր երկրի յեղափոխականներուն պահանջն է, այլ ամբողջ ժողովրդինը: Հարապատ թարգմանը պիտի լինիմ ժողովրդին, եթէ բացէ ի բաց ըսեմ, որ նա երբէք չի համոզուիր, թէ առանց միութեան կամ համերաշխութեան օգտակար և յաջող գործ մը պիտի տեսնուի:

Ժողովրդին յուսախափութիւնը ոգևորութեան կը փոխուի, միայն սիրելի Մուրատի առաջարկին իրագործումով:

Ես պարտականութիւն համարեցի հրապարակ դնել այն ինչոր բացարձակ ճշմարտութիւն է:

ՎԱՍԵԿՈՒՆԻ

Հնչակեան կուսակցութեան Կովկասի և Ռուսաստանի Պատգամաւորական Ժողովը և Հայ Յեղ. Դաշնակցութեան Արևելեան Բիւրօն Հեռուեալ ազն են բաց թողած:

«Յայտարարում ենք Ռուսաստանի և Կովկասի դաշնակցական և Հնչակեան մարմիններին և ընկերներին, նաև բոլոր քաղաքացիներին, որ Հնչակեան Սօց. Դէմ. կուսակցութեան Ռուս. և Կովկասի Պատգամաւորական Ժողովը և Հայ Յեղ. Դաշնակցութեան Արևելեան Բիւրօն, կազմել են իրանց միջից մի մարմին լիազօր՝ մշակել միջոցներ մի անգամ ընդմիջա վերջ տալու միջկուսակցական անմիտ թշնամական յարաբերութիւններին և եղբայրասպանութիւններին:

Այդ մարմնի անմիջական գործնական քայլը կը լինի ուղարկել զաւանուները իր լիազօր անդամներին և ներկայացուցիչներին քննելու և լուծելու առկախ մնացած բոլոր խնդիրները, որ պատճառ են դառնում վիրոյիշեալ թշնամութիւններին:

Լիազօյա լինելով, որ այդ ընդհարումների կործանիչ և յեղափոխութեան շահերին միանգամայն հակառակ լինելը գիտակցուած է բոլորի կողմից, կոչ ենք անում մեր բոլոր մարմիններին և ընկերներին անմիջապէս դադարեցնել, որ և է թշնամական գործողութիւն և ամէն ջանք գործ դնել խաղաղեցնելու յուշաւած մտքերը:

ՀՆՉ. ՍՕՅ. ԴԷՄ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
ՊԱՏԳԱՄԱՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ  
ՀԱՅ ՅԵՂ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ  
ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՕ

21 Փետրուար 1907

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ գանձարանում ստացուել են հետևեալ գումարները.—

ԿՈՎ. ԵՒ ՌՈՂՍ. Գործ. Յ-ընց (ընկ. Ս. Գ. Եանի ծեռ. 29 ր. 12 կ.	415	—
ԱՄԵՐ. Գործ. Յ-խմբից " (ընկ. Մ. Եանի ծեռ. 415	85	12
" " " " (ընկ. Ե. Կ. Եանի)	82	50
" " " ՄՈՒՓՈՐՏԻ Մ-ն (Ի նպաստ ըսող. քնտ. 5	—	—
" " " ԹՕՄԱՐՆՎՈՒՏԻ " " " " 7	—	50
" " " ԱԼԵՂԼԵՆՏԻ " " " " 3	—	—
" " " Յ-խմբի միջոցաւ ֆոնԱՏՔԷԼՓՈՒ Յ. 2. Էն 3	—	—
ՆՈՐ ԺԱԳՈՒՄ՝ Մ-ընց — — — — 1300	ֆ.	—
ԱՐՕՍԹԷՆՃԻ " " " " — — — — 300	—	—
ԱՄԵՐ. Գործ. „Յ-ընց — — — — 495	90	—
" " " " — — — — 257	50	—

Նուիրատուութիւններ Հնչակեան կուսակցութեան ՔՍՍՍԱՄԵՆ ՊԱՏԳԱՄԱՐԱԿԱՆ հրատարակութեան համար.  
ԸՆՁԷԼԻ Մ-ըի կանանց «Մայր-Հայաստան խմբից 500 ֆ.

M. BELLART — 7, Rue Campagne-Première 7,  
(France) PARIS.  
Imprimeur-Gérant Gabriel FARJAT